

**ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ
Գազիկ Տեր-Հարությունյան**

Հայտնի է, որ քաղաքակրթությունների եւ առանձին պետությունների զարգացումը եւ մրցունակությունը էապես պայմանավորված են գաղափարախոսական այն դրույթներով, որոնցով նրանք առաջնորդվում են: Համեմատական վերլուծություններից հետեւում է, որ արդի աշխարհում արդյունավետ են այն գաղափարախոսական հայեցակարգերը, որոնցում ներդաշնակորեն համատեղվում եւ միմյանց փոխլրացնում են ազատական, ընկերվարական եւ ազգային/ազգայնական մոտեցումները: Եվ եթե առաջին երկուսն ընդունված է համարել ունիվերսալ, համամարդկային հասկացություններ, ապա ազգայնական բաղադրիչն ունիկալ (եզակի) կատեգորիա է. այն արտահայտում է տվյալ ազգի ռազմաքաղաքական ունակությունները, սոցիալ-տնտեսական հնարավորությունները եւ այդ ամենի հենքում ընկած հավաքական մտավոր եւ հոգեւոր-մշակութային ներուժը:

Կարելի է հրատապ է նաեւ այն հանգամանքը, որ արդի «բազմաբեւեռ սառը պատերազմի» ժամանակաշրջանում քաղաքակրթական բնույթի հակամարտությունները, ունիվերսալացումը եւ գլոբալացումը պարունակում են հոգեւոր-մշակութային առճակատման եւ էքսպանսիայի տարրեր: Նման գործընթացներում շահում են այն ազգերը եւ երկրները, որոնք գործում են ավելի ակտիվ եւ համակարգված, մինչդեռ կրավորական դիրքորոշում ընդունածների անվտանգությունը եւ բնականոն զարգացումը ենթարկվում են լուրջ փորձությունների: Այստեղից հետեւում է, որ հոգեւոր-մշակութային եւ այլ քաղաքակրթական հատկանիշներ ունեցող ռեսուրսներն ունեն ռազմավարական նշանակություն եւ մաս են կազմում այնպիսի հիմնարար հասկացության, ինչպիսին է ազգային անվտանգությունը (այս առիթով նշենք, որ համաձայն ընդունված դասակարգման՝ հոգեւոր-մշակութային խնդիրներով զբաղվում է տեղեկատվական անվտանգությունը, որն ազգային անվտանգության կարեւորագույն բաղադրամասն է):

Միեւնույն ժամանակ, քաղաքակրթական ռեսուրսներն ի սպաս ազգային շահերի դնելը ենթադրում է որոշակի նախապայմաններ: Առաջնահերթը նման ռեսուրսների էությունն ու քաղաքակրթական

մակարդակն է: Անշուշտ, ցանկացած ազգ կամ ազգություն ունի յուրովի, երբեմն անկրկնելի մշակութային ժառանգություն, սակայն արդի գլոբալ զարգացումների հարթությունում այն միշտ չէ, որ մրցունակ է: Մյուս նախապայմանը տեսականորեն մրցունակ քաղաքակրթական ներուժը քաղաքական-հասարակական ոլորտում արդյունավետ գործող ռազմավարական ռեսուրսի վերածելու եւ կիրառելու ունակությունն է:

Այս ամենի առիթով պետք է ընդունել, որ հայությունը, տիրապետելով հսկայական եւ մրցունակ քաղաքակրթական ներուժի, միշտ չէ, որ կարողանում է այն լավագույնս օգտագործել իր ազգային ծրագրերի եւ քաղաքական գործընթացների հարթությունում: Ավելին. տպավորությունն այնպիսին է, որ սեփական քաղաքակրթական ռեսուրսների, այսինքն՝ Հայաստանի եւ հայության պատմության, աշխարհագրության, լեզվի, մշակույթի, հոգեւոր եւ նյութական այլ արժեքների (կամ այլ խոսքերով՝ հայագիտության) վերաբերյալ մեր հանրության իմացությունը նույնպես երբեմն բավարար չէ: Հարկ է նաեւ ամրագրել, որ հայագիտությունը հանդիսանում է ոչ միայն հոգեւոր-մշակութային արժեքներ պահպանող, այլեւ այդ արժեքները ստեղծող եւ նրա կրողների (հայության) հոգեկերտվածքը ձեւավորող մի համակարգ:

Հայագիտության հիմնարար եւ կիրառական ճյուղերը. Ներկայիս իրավիճակը թելադրում է հայագիտությանն առնչվող գործառնությունների պայմանական տարանջատում երկու ճյուղերի՝ հիմնարարի եւ կիրառականի: Համաձայն նման մոտեցման, հիմնարար հայագիտության նպատակն ինքնաճանաչողության կամ այլ խոսքերով՝ հայաճանաչողության խնդիրն հետամուտ լինելն է: Իր հերթին, կիրառական հայագիտության նպատակն է հիմնարար հետազոտություններից ստացված արդյունքներն առավելագույնս արդյունավետ օգտագործել տեղեկատվական, գաղափարախոսական եւ քաղաքական հարթություններում ու այդպիսով՝ դրանք ի սպաս դնել Հայաստանի ու հայության ազգային շահերին եւ անվտանգության ապահովման խնդիրներին: Այդ համատեքստում կիրառական հայագիտությունը ենթադրում է կենսագործունեության ամենատարբեր ոլորտներում իրականացնել քաղաքական զարգացումների տրամաբանությանը համահունչ համակարգված գործառնություններ, որոնց նպատակն է ապահովել Հայաստանի եւ հայության տեղեկատվական (հոգեւոր-մշակութային) անվտանգությունը եւ մրցունակությունը:

Հարկ է հատուկ շեշտել, որ տեղեկատվական անվտանգության դրույթների վրա հիմնվող կիրառական հայագիտության գործառնություններից

չի բխում, թե ինքնաճանաչողության խնդիրը մղվում է հետին պլան եւ վերածվում պարզունակ քարոզչական ու քաղաքականացված գործընթացի: Հակառակը. հայագիտության կիրառական գործառույթները, հրատապ դարձնելով արժարժվող գիտական խնդիրները, միջազգայնացնում եւ խորացնում են դրանց վերաբերյալ եղած պատկերացումները նաեւ հիմնարար հարթությունում՝ նպաստելով հայագիտության տարբեր ոլորտների սերտաճմանը եւ նոր հիմնարար հետազոտական ուղղությունների ձեւավորմանը:

Կիրառական հայագիտության համատեքստում իրագործվող նպատակային գործառույթները գլխավորապես ընկած են *տեղեկատվական-քարոզչական գործողությունների* հարթությունում: Այդ գործողությունները պետք է հենվեն, մասնավորապես, հետեւյալ հայեցակարգային դրույթների վրա.

1. *Հայկական (ուրույն) քաղաքակրթության*՝ որպես հայության տարբեր հատվածները միավորող գաղափարի ձեւավորումը եւ հայկական, ինչպես նաեւ միջազգային հանրությունում այդ գաղափարի տեղեկատվական արմատավորումը: Ունիվերսալ արժեքային համակարգերի առանցքային բաղադրատարրեր ներառող *հայկական քաղաքակրթություն* հասկացությունը տեղեկատվական անվտանգության տեսանկյունից դիտարկվում է ե՛ւ որպես քաղաքակրթական բախումների արդի դարաշրջանում հայության ինքնությունը պահպանող (մասնավորապես՝ հայության տարբեր հատվածները միավորող), ե՛ւ միաժամանակ որպես գլոբալ հարթությունում ինտեգրվելու եւ ակտիվ դերակատարում ունենալու միջոց (գործիք):

2. *Առաջինը քրիստոնեությունն ընդունած պետության* գաղափարի համատեքստում՝ կիրառական հայագիտության ուշադրության կենտրոնում պետք է գտնվի քաղաքակրթական արժեքների ստեղծման եւ տարածման գործում առանցքային դերակատարում ունեցող *Հայ Առաքելական եկեղեցին*: Տեղեկատվական գործողություններ իրագործելու տեսանկյունից այն Հայաստանի եւ հայության *հոգեւոր անվտանգությունն ապահովող ինստիտուցիոնալ*, իսկ կազմակերպչական առումով՝ արդիական եւ արդյունավետ գործող *ցանցային կառույց է*, որը շարունակաբար իրագործում է հայության ազգային-պետական, հոգեւոր-գաղափարական եւ սոցիալական կազմակերպումը:

3. Հայկական *քաղաքակրթական շարունակականության* գաղափարի տեղեկատվական ամրագրումը հայկական եւ միջազգային հանրությունում: Որպես հիմնադրությային ելակետ ընդունվում են Հայ ժողովրդի Հայկական լեռնաշխարհում *անընդմեջ բնակության*, տարբեր

ծեւաչափեր ընդունած հայոց *պետականության շարունակականության* տեղեկատվական հասկացությունները:

4. Ժամանակակից Հայաստանի՝ որպէս հինավուրց քաղաքակրթություն կրողի, ինչպէս նաեւ արդի քաղաքական, տնտեսական եւ գիտատեխնիկական գործընթացների լիարժեք դերակատարի, ընդհանրական տեղեկատվական *կերպարի (իմիջի)* ձեւավորումը միջազգային հանրությունում:

5. *Հայաստանը հայության հոգեւոր-մշակութային կենտրոնն է* դրույթի ամրագրումը եւ դրա հիման վրա Հայրենիք—Սփյուռք հարաբերությունների հայեցակարգի մշակումը, որում պետք է կարեւորվեն՝

❖ *սփյուռքագիտության*՝ որպէս հայագիտության ճյուղի զարգացման, անհրաժեշտությունը եւ այդ համատեքստում՝ հայկական ինքնության տարբեր դրսեւորումների, մասնավորապէս՝ *այլալեզու եւ այլադավան հայության* հետ կապված խնդիրների համախմբի կարեւորումը,

❖ Սփյուռքի հոգեւոր եւ մտավոր ռեսուրսների հաշվազրուումը, եւ Հայրենիք—Սփյուռք ընդհանուր տեղեկատվական դաշտի ձեւավորման անհրաժեշտությունը՝ նկատի ունենալով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները,

❖ հայագիտության բնագավառում մեր ազգային շահերին նպաստող եւ հակասող ռազմավարություններից յուրաքանչյուրի վերաբերյալ համաչափ (սիմետրիկ) եւ անհամաչափ (ասիմետրիկ) մոտեցումների մշակումը:

Վերոհիշյալ գործառույթների իրագործումը ենթադրում է հետեւողականորեն իրականացնել գիտական հետազոտությունների եւ տեղեկատվական գործողությունների փոխկապակցված համախումբ, որը կլուծի հիմնարար եւ կիրառական հայագիտության հրատապ խնդիրները: Այսինքն՝ նման աշխատանքներ իրագործելու համար անհրաժեշտ է ձեւավորել պետականորեն աջակցվող մի մասնագիտացված կառույց, որը պայմանականորեն կանվանենք Հայագիտական կենտրոն (ՀԿ):

Հայագիտական կենտրոնի նպատակները եւ գործառույթները.

Հարկ է հատուկ շեշտել, որ այն պետք է լինի ոչ թե հայագիտության ոլորտում հիմնարար հետազոտություններ կատարող մի նոր կենտրոն (վերջիններիս թիվը ՀՀ-ում եւ արտերկրում հասնում է մի քանի տասնյակի), այլ նման կենտրոնների աշխատանքը համակարգող, ոլորտում հեռանկարային եւ հրատապ հետազոտություններին աջակցող, տեղեկատվական, հասարակական ու քաղաքական որոշակի դերակա-

տարում ունեցող մի կազմակերպություն: ՉԿ-ն, մասնավորապես, պետք է իրականացնի համակարգված գործառույթներ հետեւյալ ուղղություններով.

❖ իրագործի արդեն գործող հայագիտական կառույցների եւ նրանց գործունեության շարունակական մոնիթորինգ եւ ելնելով ստացված տվյալների վերլուծությունից՝ ձգտի համակարգել նրանց գործունեությունը: Այն պարագայում, երբ նման կառույցները հետապնդում են հակագիտական, քաղաքականացված նպատակներ, որոնք հակասում են մեր ազգային շահերին, ՉԿ-ն պետք է փորձի չեզոքացնել դրանց գործունեությունը տեղեկատվական դաշտում,

❖ հիմնարար հայագիտության մշակումների մասին իրագեկ դարձնի միջազգային գիտական շրջանակներին եւ լայն հանրությանը,

❖ տանի քարոզչական աշխատանք՝ արտերկրում Հայաստանի եւ հայության քաղաքակրթական դրական «իմիջի» ձեւավորման ուղղությամբ:

Հայագիտական կենտրոնը եւ տեղեկատվական անվտանգության համակարգը. Ակնհայտ է, որ ենթադրվող ՉԿ-ն պետք է գործի ժամանակակից «ուղեղային կենտրոնների» ոճով եւ մաս կազմի նման այլ կենտրոնների կողմից ձեւավորված համակարգի: Նման համակարգի նպատակը, մասնավորապես, պետք է լինի մեր ազգային շահերի եւ ազգային/տեղեկատվական անվտանգության համատեքստում փորձագիտական-խորհրդատվական ծառայությունների մատուցումը երկրի քաղաքական ղեկավարությանը:

Այս կապակցությամբ շեշտենք, որ ժամանակակից հայագիտությունը պետք է համահունչ լինի արդի քաղաքական զարգացումներին, իսկ քաղաքագիտական հետազոտություններն իրենց հենքում պետք է լինեն «հայագիտական» (այս հասկացության լայն մեկնաբանությամբ): Այսինքն, հայագիտական եւ քաղաքագիտական ծրագրերը պետք է ուժեղացնեն եւ լրացնեն միմյանց: Անշուշտ, տեղեկատվական անվտանգության համակարգում իրենց ուրույն տեղը պետք է ունենան արտերկրում ՀՀ իմիջի բարելավմամբ, Սփյուռքահայության եւ հայրենադարձության խնդիրներով զբաղվող կառույցները, որոնց հետ ՉԿ-ն պետք է գործակցի փոխլրացման եւ փոխուժեղացման սկզբունքով:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ **Սուրեն Մանուկյան**

Քաղաքակրթական տարբերությունները, որոնք պարբերաբար Արեւմուտքի եւ իսլամի միջեւ սուր հակասությունների պատճառ են դառնում, ամենաշատ քննարկվող թեմաներից են վերլուծաբանների եւ գիտնականների շրջանում:

Սակայն հետազոտողները, հիմնականում հետեւելով Հանտինգտոնի առաջարկած ուղեգծին, կենտրոնանում են այդ երեւոյթի փիլիսոփայական եւ աշխարհաքաղաքական կողմերի վրա՝ հաճախ անտեսելով այդ պայքարի առօրեական, փաստական դրսեւորումները: Հիմնական ուշադրության առարկա են դառնում մի քանի աղմկահարույց դեպքեր (Մուհամեդ մարգարեի ծաղրանկարների տպագրությունը դանիական թերթերից մեկում եւ դրա շուրջ ծագած անկարգությունները, Ֆրանսիայի մայրաքաղաքի ծայրամասերում բռնկված երիտասարդական հուզումները կամ Հռոմի պապ Բենեդիկտոս XVI-ի ճառը), որոնք, իհարկե, կարելու է եւ տպավորիչ, սակայն այսբերգի միայն երեւացող կողմն են:

Իրականում սեփական արժեքների տարածման եւ պարտադրման ուղղությամբ տարվող աշխատանքն ընթանում է զրեթե ամեն օր եւ ամենուրեք: Մշտապես կարելի է հանդիպել այդ հակամարտության առօրեական, կենցաղային դրսեւորումների, որոնք ի ցույց են դնում «չերեւացող» պայքարը:

Հենց այս ամենօրյա պայքարն է, որ հստակ ցույց է տալիս հակամարտության թեժությունը եւ թույլ է տալիս խոսել «մշակութային պատերազմի» մասին, երբ Արեւմուտքն ու իսլամական աշխարհը կարծես շարունակում են փոխադարձաբար ստուգել հակառակորդի ամրությունը եւ հավատարմությունը սեփական արժեքային համակարգին:

Քողը՝ որպէս օտարման նշան

2006թ. Մեծ Բրիտանիայում հասարակական լայն քննարկում ընթացավ՝ կապված Դյուբեյի քաղաքի տարրական դպրոցի աշխատակցուհի Այշա Ազմայի հետ: Ազման հեռացվել էր աշխատանքից աշխատավայրում իսլամական կանանց համար ավանդական քող կրելու պատճառով: Դպրոցի ղեկավարության բացատրությունն այն էր, որ քողով

դեմքը ծածկելն աշակերտների համար դժվարընկալելի է դարձնում անգլերենի ուսուցչուհու արտասանությունը:

2006թ. հոկտեմբերի 19-ին դատարանն Ազմայի նախկին գործատուներին պարտադրեց դրամական փոխհատուցում տրամադրել, սակայն միաժամանակ հրաժարվեց նրան «խտրականության զոհ» ճանաչել:

Այսպիսով, այս աշխատանքային վեճը քաղաքակրթական հարթություն տեղափոխվեց: Ու թեև եվրոպական դատարանը հայցը բավարարեց, սակայն փորձեց դա սեփական քաղաքակրթական մոտեցումների շրջանակում անել: Հարցին անդրադարձավ նույնիսկ Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերը՝ անվանելով գլխաշորը եւ քողը «օտարման նշան»: Իտալիայի վարչապետ Ռոմանո Պրոդիի կարծիքով՝ խնդիրը ոչ թե հագուստն է, այլ եվրոպական մշակույթի համար անընդունելի «փակ» լինելու գաղափարը:

Օլիմպիական խաղեր եւ Ռամադան

Մեկ այլ հետաքրքրական քննարկում տեղի ունեցավ «քողի դեպքի» հետ զուգահեռ: Մի շարք մահմեդական պետություններ պաշտոնապես դիմել էին 2012թ. Լոնդոնում կայանալիք Օլիմպիական խաղերի կազմակերպչին՝ առաջարկելով տեղափոխել արդեն իսկ ամրագրված ժամկետները, որոնք համընկնելու են մահմեդականների համար սուրբ Ռամադան ամսի հետ, ինչն ի սկզբանե անհավասար պայմանների մեջ կարող է դնել իսլամադավան մարզիկներին: Նախաձեռնությունն անմիջապես ողջունեցին ոչ միայն Մարդու իրավունքների Լոնդոնի իսլամական հանձնաժողովը եւ Միավորված թագավորության մահմեդականների միությունը, այլ նաեւ Ռուսաստանի Մուֆտիների խորհուրդը:

Կազմակերպչին զիջումների չզնաց, սակայն մահմեդականների նախաձեռնությունն անգամ խոսուն է: Այն լրիվ համահունչ է ժամանակի ոգուն եւ տրամաբանությանը: Ռամադանի տոները համընկել էին Օլիմպիական խաղերին նաեւ 1980թ., սակայն այդ ժամանակ ոչ մի իսլամական պետության մտքով չանցավ հայտարարել դրանք բոյկոտելու մասին, քանի որ այն ժամանակների համար ավելի ընկալելի էին քաղաքական բոյկոտները:

Ամերիկյան պաշարման մեջ

Հետաքրքիր է դիտարկել իրավիճակն ԱՄՆ-ում, որը ղեկավարելով հակաահաբեկչական պայքարը եւ պատերազմներ վարելով իսլամական երկրներում՝ ինքն է ենթարկվում որոշակի մարտահրավերների

սեփական երկրի ներսում: Օրինակ, մի քանի իսլամիստական կայքեր (www.soundvision.com, www.dawanet.com, www.islamicidefoundation.com) բացահայտ կերպով աշխատանք են տանում ԱՄՆ-ի հանրային դպրոցներում վերահսկողություն հաստատելու ուղղությամբ: Կոչ է արվում, օրինակ, դպրոցներում կազմակերպել մահմեդական ցուցահանդեսներ, մահմեդական տեղեկագրեր հրատարակել, մահմեդական գրականություն վաճառող կրպակներ ստեղծել, դպրոցական թերթերում հայտարարություններ զետեղել հեռախոսով իսլամի մասին անվճար տեղեկություններ ստանալ ցանկացողների համար, մահմեդական խմբակներ ստեղծել իսլամադավանների մասին դրական կարծիք ձեւավորելու համար, իսլամի վերաբերյալ գրքեր մատակարարել դպրոցական գրադարաններին, ազատ թեմաներով զեկույցների համար ընտրել իսլամի վերաբերյալ թեմաներ եւ այլն: Այս կայքերում կան նաեւ խորհուրդներ՝ ուղղված դպրոցական ուսուցիչներին եւ մանկապարտեզի դաստիարակներին՝ այն մասին, թե ինչպես աշխատել աշակերտների հետ:

2006թ. ԱՄՆ-ում բուռն կերպով քննարկվեց նաեւ Մինեապոլիսի օդանավակայանի որոշ մահմեդական վարորդների կեցվածքը, որոնք հրաժարվում էին սպասարկել այն ուղեւորներին, որոնք բացահայտ կերպով ոգելից խմիչք էին տեղափոխում: Օդակայանում տեղափոխումներ իրականացնող ընկերությունն առաջարկեց հատուկ նշաններ տեղադրել այն մեքենաների վրա, որոնք այս քաղաքականությունն են որդեգրել, սակայն ամերիկյան հանրությունը տագնապում է, որ այս օրինակը կարող է վարակիչ լինել եւ տարածվել ամբողջ երկրով մեկ:

Այս պայքարը 2006թ. ունեցավ նաեւ որոշ ծայրահեղ դրսեւորումներ: ԱՄՆ-ի մի քանի քաղաքներում (Յուսիսային Կարոլինայի նահանգային համալսարանում մարտի 3-ին, Սիեթլի Յրեական ֆեդերացիայի շենքում հուլիսի 28-ին եւ այլն) մահմեդական երիտասարդները մի շարք սպանություններ իրականացրին, ինչն ամերիկյան հետազոտող Դենիել Փայփսը անվանեց «հանկարծակի ջիհադի սինդրոմ», երբ հանգիստ կյանք վարող մահմեդականը հանկարծակի ահաբեկչություն է իրականացնում: Այսպես, Յուսիսային Կարոլինայի ահաբեկիչ Տախերի-ազարը միայն դրական գծերով էր բնորոշվում իր ծանոթների կողմից, սակայն ձերբակալությունից հետո հայտարարեց, որ եկել է Միացյալ Նահանգների բնակիչներին սպանելու ժամանակը, իսկ դատարանում գոհունակություն հայտնեց, որ դատվում է, քանի որ դատավարության ընթացքում հնարավորություն կունենա հաղորդել Աստծո կամքը:

Ավստրալական դեպքը

Չեոտաքրքիր է, որ այս հակասությունները չեն շրջանցել նույնիսկ արեւմտյան քաղաքակրթության այնպիսի հեռավոր մի պետություն, ինչպիսին է Ավստրալիան: Երկրի վարչապետ Ջոն Յովարդը վերջերս հայտարարել է, որ այն մահմեդականները, որոնք ցանկանում են ապրել Ավստրալիայում շարիաթի օրենքներով, պետք է լքեն երկիրը: Դրան ի պատասխան, Իսլամական համայնքների ավստրալական ընկերակցության ղեկավար Ամիր Ալին 2006թ. հոկտեմբերի 9-ին հանդես եկավ զարմանալի մի հայտարարությամբ այն մասին, որ «Ավստրալիան մահմեդական երկիր է: Ավստրալացիների մեծամասնությունը կիսում է իսլամական արժեքները, թեև մահմեդական չէ»:

Չակասությունները նույնիսկ բախումների են տանում: Այսպես, 2005թ. դեկտեմբերին Սիդնեյ քաղաքի արվարձաններից մեկում մի քանի օր շարունակ տեղի էին ունենում քրիստոնյա տեղաբնիկների բախումներ իսլամադավան վերաբնակների հետ: Երկրում կառավարող Ազատական կուսակցության ներկայացուցիչ Բրենդան Նելսոնը նույնիսկ դիմել էր ներգաղթողներին հետելյալ ճառով. «Քրիստոնյաներն են հիմնել այս երկիրը: Եվ եթե մեր Աստվածը վիրավորում է ձեզ, ապա առաջարկում են ընտրել մեկ այլ երկիր բնակության համար, որովհետև այս մեկը մեր մշակույթի մասն է»:

2006թ. Ավստրալիայի իսլամական հարաբերությունների ֆորումը պահանջեց շրջանառությունից հանել «Սուրբ ծնունդ» (Christmas) բառը՝ պատճառաբանելով, որ այն դառնում է բազմամշակութային հասարակության մի մասի օտարման պատճառ: Կազմակերպության ղեկավար Կուրանդա Սեյթը հայտարարել էր, թե ժամանակն է, որ իր երկիրը նույնպես հետևի Մեծ Բրիտանիայի օրինակին, որտեղ այդ տոները պաշտոնապես անվանվում են Winteral բառով, winter – ձմեռ եւ festival – տոն բառերից ստեղծված հապավումով:

Խորհրդանիշների պատերազմ

Վերջին դեպքը շատ հետաքրքիր է, քանի որ առնչվում է հավատքի խորհրդանիշների հետ, որոնց նշանակությունը ցանկացած կրոնում առանցքային է: Նախկինում նման փորձեր նույնպես եղել են:

Այսպես, 2002թ. օգոստոսին Մուհամեդ Ազաուին հեռացավ Լոնդոնի մայրաքաղաքային երթևեկության տեսչի աշխատանքից՝ քայլը պատճառաբանելով ռասայական խտրականության զոհ լինելու հանգամանքով:

Նա հայտարարեց, որ իբրև մահմեդական չի կարող այլ կրոնի խորհրդանիշ կրել: Տվյալ դեպքում խոսքը ոստիկանի կրծքանշանի վրա պատկերված սուրբ Էդուարդի փոքրիկ խաչի մասին էր, որը 18-րդ դարից թագավորական իշխանության եւ ոստիկանության խորհրդանիշն է: Երբ ոստիկանության պետի տեղակալ Յան Բլեյրն առաջարկեց ստեղծել մահմեդական եւ այլ կրոններին պատկանող սպաների համար կրծքանշանի այլ ձեւ, ոստիկանապետ Ջոն Ստեւենսը, հանդիպելով բազմաթիվ բողոքների, մերժեց այդ ծրագիրը:

2003թ. հոկտեմբերին իտալական Օֆենա քաղաքի բնակիչ, իսլամադավան Ադել Սմիթը դատական հայց ներկայացրեց՝ պահանջելով հանել խաչն այն դպրոցի լսարանից, ուր հաճախում էր իր որդին: Շրջանային դատավորը բավարարեց հայցը՝ պատճառաբանելով, որ հանրային դպրոցները պետք է կրոնական խորհրդանիշներից ազատ լինեն: Իտալացիները շատ մեծ դժգոհությամբ ընդունեցին այդ որոշումը: Երկրի նախագահ Աձգելիո Չիամպին խաչն անվանեց այն արժեքների խորհրդանիշ, որոնց վրա հիմնվում է իտալացիների ինքնությունը:

2005թ. աշնանը Մեծ Բրիտանիայի բանտերի գլխավոր վերստուգիչ Աննե Օուերսն արգելեց բարձրացնել սուրբ Գեւորգի խաչով Անգլիայի ազգային դրոշը՝ պատճառաբանելով դրա կապը խաչակիրների հետ, ինչը կարող էր վիրավորել մահմեդականներին: Արաբա-բրիտանական փոխըմբռնման խորհրդի տնօրեն Քրիս Դոյլը ողջունեց այս քայլը՝ նշելով, որ եկել է երկրի համար նոր դրոշ եւ նոր հովանավորող սուրբ գտնելու ժամանակը, որոնք չեն ասոցացվելու արյունալի անցյալի եւ խաչակիրների հետ եւ որի հետ բոլոր բրիտանացիները կկարողանան իրենց նույնականացնել:

Հետաքրքիր է, որ 2006թ. ամռանն Անգլիկան եկեղեցին նույնիսկ սկսեց ամենայն լրջությամբ քննարկել սուրբ Գեւորգին Մեծ Բրիտանիայի խորհրդանիշի կարգավիճակում սուրբ Ալբանով փոխարինելու հավանականությունը:

Գրեթե նույն պահանջով հանդես եկան Ռուսաստանի մահմեդականների միանգամից մի քանի միությունների բարձրաստիճան պաշտոնյաներ: Նիժնի Նովգորոդի մարզի մահմեդականների հոգեւոր խորհրդի փոխնախագահ Դամիր Մուխետդինովը պահանջեց հանել խաչը եւ ուղղափառության այլ նշանները ռուսական պետական զինանշանից, քանի որ այն վիրավորում է մահմեդականներին՝ հակասելով երկրի աշխարհիկ բնույթին եւ չնպաստելով Ռուսաստանի ժողովուրդների միասնությանը: Նրան ձայնակցում են շատերը, իսկ Ասիական Ռուսաստանի մահմեդականների հոգեւոր խորհրդի նախագահ Նաֆիգուլլա Աշիրովը

ավելի հեռուն է գնում՝ պահանջելով բոլոր պետական հիմնարկներն ազատել քրիստոնեական խորհրդանիշներից:

Արեւմուտքի պատասխանը

Իսլամական այս ակտիվացումը, բնականաբար, իր համարժեք պատասխանն է ստանում Եվրոպայում: Ավելի հստակ եւ պատճառաբանված սկսեցին ընկալվել այն մարդկանց ձայները, որոնք քննադատում էին արեւմտյան հասարակությանը մահմեդականների «ոչ բավարար ինտեգրումը» եւ Եվրոպական հանդուրժողականության ժայռահեղ դրսեւորումները, որոնք հստակորեն օգտագործվում են իսլամիստական բազմաթիվ կազմակերպությունների կողմից:

Չետաքրքիր է, որ իսլամական աշխարհի եւ Արեւմուտքի հակամարտության առաջին գծում ամենաակտիվ դիրքերը գրավել են հենց քրիստոնեական եկեղեցիների սպասավորները: Այն ժամանակ, երբ Յոննիս Բենեդիկտոս XVI-ը փորձում էր մեղմել իսլամական աշխարհի վրդովնումը, որն առաջացել էր իր «ռեզենսբուրգյան ճառից» հետո, Իտալիայի կաթոլիկ եպիսկոպոսների կոնֆերանսի առաջնորդ Կամիլլո Ռուինին, Ելույթ ունենալով Վերոնայում Ազգային եկեղեցական կոնգրեսի փակման արարողությանը, անհանգստություն հայտնեց «իսլամի կրոնական, սոցիալական եւ քաղաքական վերածնունդի տեմպերով» եւ «համաշխարհային ասպարեզում գլխավոր հերոսներ դառնալու մահմեդականների ձգտմամբ»: Անգլիկան եկեղեցու ներկայացուցիչները շատ կոշտ ձեւով քննադատեցին սեփական կառավարությանը, որը «չպատճառաբանված սոցիալական եւ ֆինանսական առավելություններ է տրամադրում մահմեդականներին»: Իր հերթին Ավետարանչական եկեղեցու ներկայացուցիչ եպիսկոպոս Մարգոթ Կեսմանը կոչ արեց իսլամադավաններին ինտեգրվել եւ հանդուրժողական լինել արեւմտյան արժեքների նկատմամբ:

Երբ Ստրասբուրգի հանրային սննդի վայրերում քաղաքապետարանի կողմից արգելվեց մատուցել խոզի ապուր, ցույցերի ալիք բարձրացավ. ցուցարարներն այդ որոշումն անվանում էին քաղաքակրթական նահանջ իսլամի առջեւ: Իտալիայում օրենք ընդունվեց, որն արգելում է կանանց քող կրել, գերմանական դպրոցներում պարտադիր հայտարարվեցին տղաների եւ աղջիկների համատեղ լողի դասերը, Իռլանդիայում տեղական քաղաքացիություն ստանալ ցանկացողներին պարտավորեցրին հրաժարվել բազմակնությունից, իսկ Ավստրալիայում մտցվեցին անգլերենի, Ավստրալիայի պատմության եւ մշակույթի իմացության

քննություններ: Մի բարձրաստիճան բելգիական քաղաքական գործիչ չեղյալ հայտարարեց հանդիպումն իրանական պատվիրակության հետ, երբ նրա անդամները, որպես պայման առաջադրեցին սեղանին ոգելից խմիչքներ չդնել:

Որ այս ընդգծված դիրքորոշումը վերաբերում է առաջին հերթին մահմեդականներին, ցույց տվեց այն վրդովմունքը, որով Արեւմուտքն ընդունեց քրիստոնեություն ընդունած աֆղանցու նկատմամբ մահապատժի որոշումը կամ երկու նորզելանդացի լրագրողներին բռնի կերպով իսլամափոխ անելու դեպքը Պաղեստինում, եւ այն անտարբերությունը, որով Արեւմուտքն արձագանքեց մի շարք հնդկական նահանգներում հնդիկների կրոնափոխությունն արգելող օրենքներին:

Չեռանկարներ

Այսպիսով, քաղաքակրթական պայքարն իսլամի եւ Արեւմուտքի միջեւ արդեն իրողություն է: Պարզ է նաեւ, որ «նշակութային պատերազմներն» ընթանում են հիմնականում Արեւմուտքում: Այլ հարց է, թե որ միտումը կգերիշխի ապագայում:

Չեռագոտողներից ոմանք, օրինակ, ամերիկացի Մարկ Սթեյնը, իր «Միայնակ Ամերիկա» գրքում կանխագուշակում է, որ Եվրոպան վախճանվելու է, իսկ ԱՄՆ-ը միայնակ է մնալու այս «քաղաքացիական պատերազմում, որի առաջին կրակոցները Մադրիդի եւ Լոնդոնի ահաբեկչական գործողություններն են եւ Թեո վան Գոգի սպանությունն Ամստերդամում»:

Իսկ ըստ տեսաբանների մեկ այլ խմբի, որոնց ներկայացուցիչն է Դենիել Փայփսը, Արեւմուտքի բնակիչների կեցվածքը նմանվում է «աստիճանաբար տաքացվող ջրի մեջ գտնվող գորտի կեցվածքին», երբ նրա մարմնի ջերմաստիճանը հարմարվում է շրջակա միջավայրի ջերմաստիճանին. գորտը հարմարվում է ջրի տաքացմանը, իսկ երբ այն անտանելի եւ մահացու է դառնում, արդեն ուշ է լինում:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՁ Դավիթ Հովհաննիսյան

Վերջին տարիների եւ հատկապես 2006 թվականի մի շարք իրադարձություններ ստիպում են մեր ժամանակների քաղաքական եւ հասարակական գործիչներին, քաղաքագետներին, փիլիսոփաներին, սոցիոլոգներին վերստին փորձել գուշակել, թե ինչպիսին են լինելու առարկայական գործընթացները 2007-ին եւ ինչպես են դրանք ազդելու ազգային եւ պետական շահերի իրականացման վրա:

Հարցը, թե զարգացման ինչ ուղի պետք է ընտրել այսուհետ՝ կանգնած է ոչ միայն նորանկախ ու դեռեւս կայացող պետությունների, այլեւ հզորներուժ եւ ամուր պետական ավանդույթներ ժառանգած բազմաթիվ երկրների էլիտաների առաջ:

Այդ առումով, Միացյալ Նահանգների համար միջազգային քաղաքականության ոլորտում ամենակարեւոր գործընթացները կապված են միջուկային զենքի տարածման կանխարգելման (հիմնականում՝ Իրան եւ Հյուսիսային Կորեա) եւ իրաքյան պատերազմի հետ, Ռուսաստանի համար՝ էներգետիկ խնդիրների (Ռուսաստան–Եվրամիություն, Ռուսաստան–միջինասիական երկրներ եւ այլն) եւ խորհրդային ազդեցության գոտիներում Մոսկվայի դիրքերի ամրապնդման կամ վերականգնման (հատկապես՝ Վրաստան, Ուկրաինա) հետ, Գերմանիայի համար՝ Եվրամիության նախագահությունը ստանձնելու փաստով պայմանավորված՝ միջեվրոպական քաղաքականության, էներգետիկ խնդիրների, շուկաների ազատականացման հետ եւ այլն:

Երկարատեւ ազդեցության տեսակետից, հավանաբար, կարեւորագույն իրադարձությունը՝ Հյուսիսային Կորեայի «միջուկային ակումբ» ոչ լեգիտիմ կարգավիճակով մուտք գործելն է: Այս իրադարձությունն այլընտրանքի հնարավորություն չի թողնում տարածաշրջանի մի քանի այլ երկրների համար:

Հարավային Կորեան, որը տեխնոլոգիական եւ արդյունաբերական տեսակետից շատ ավելի զարգացած երկիր է, քան իր հյուսիսային հարեւանը, որի հետ հարաբերությունները շարունակում են ծայրահեղ լարված մնալ, ստիպված է լինելու արագացնել իր սեփական միջուկային ծրագրերի իրականացումը:

Ճապոնիան, որը համաշխարհային գիտատեխնոլոգիական եւ

արդյունաբերական առաջատարներից մեկն է, անշուշտ, շատ վաղուց արդեն կարող էր սեփական միջուկային զենք ունենալ, սակայն Երկրորդ համաշխարհային պատերազմի հետեւանքները մինչեւ վերջերս լուրջ արգելք էին հանդիսանում դրա համար: Սակայն ներկայումս ազգային անվտանգության հրամայականները, ամենայն հավանականությամբ, կստիպեն, որպեսզի Տոկիոն հրաժարվի իր ավանդական քաղաքականությունից, որը հիմնված էր երկրի ռազմականացումը կանխելուն ուղղված սկզբունքների վրա: Ճապոնացիները ստացան այնպիսի փաստարկներ, որոնք կարող են համոզել միջուկային զենք ձեռք բերելու թե՛ ներքին եւ թե՛ արտաքին հակառակորդներին:

Հասկանալի է նաեւ, որ Իրանի եւ մյուս միջուկային զենք ձեռք բերելու ցանկությունն ու հնարավորությունն ունեցող պետությունների նկատմամբ արգելափակող քաղաքականությունն այլեւս զրկվում է իրավական եւ քաղաքական լուրջ հիմքերից: Փաստորեն ներկայումս ստեղծվում է այնպիսի իրավիճակ, երբ տասնամյակների ընթացքում իր էֆեկտիվությունն ապացուցած 1968թ. Միջուկային զենքի տարածումը կանխող պայմանագիրը եւ վերջինիս սկզբունքների հիման վրա ձեւավորված պայմանագրերի ամբողջ համակարգը պետք է վերանայվեն:

Նոր իրավիճակն ընտրության առջեւ է կանգնեցնում վերոնշյալ երկրների որոշումներ ընդունող շրջանակներին, քանի որ միջուկային զենք ունեցող պետության կարգավիճակը բոլորովին այլ հարթություն է տեղափոխում պետական անվտանգության, ազգային նպատակների, հասարակության արժեքների ձեւակերպման եւ պաշտպանության հիմնահարցերը:

Միջուկային զենքի տարածման վտանգն ավելի շոշափելի է դարձնում էներգետիկ շուկայում տարեցտարի աճող լարվածությունը, որը հունքի մատակարարումներից կախման մեջ գտնվող երկրներին մղում է հարցի լուծումը որոնել միջուկային էներգետիկայի զարգացման մեջ, ինչը բնականորեն նպաստում է միջուկային տեխնոլոգիաների տարածմանը:

Էներգետիկ շուկայում մրցակցության աճող լարվածության հետ են կապված միջինարեւելյան կոնֆլիկտային գոտիներում գրանցված բռնկումները, Ռուսաստան–Եվրամիություն հարաբերություններում հակասությունների սրումը, Չինաստանի ականա ակտիվացումը համաշխարհային քաղաքականության մեջ (այսինքն՝ այս երկրի համար միշտ անցանկալի, սակայն այլեւս անխուսափելի գլոբալացումը):

Իր մշակույթը բացառիկ եւ իրեն մնացած բոլոր «բարբարոսներից» տարբերող Չինաստանը, համաշխարհային տնտեսության մեջ ամբողջովին ինտեգրվելով, նվազեցրել է իր ինքնամեկուսացմանն ուղղված

հնարավորությունները, ինչը ստիպում է առաջ քաշել գլոբալացման չինական նախագիծը, որը դեռևս գաղափարական առումով միայն քննարկման մակարդակի վրա է, այսինքն՝ իրական ձեւակերպումներ չունի: Նման հայեցակարգի ձեւավորումը հակասում է չինական բացառիկության հիմք հանդիսացող կոնֆուցիականության սկզբունքներին: Անշուշտ, հզոր պետականություն եւ կայսերական ամուր ավանդույթներ ունեցող չին ազգը կգտնի իր ուրույն պատասխանը նոր մարտահրավերներին, սակայն ներկայումս խնդիրն այն է, որ այդ պատասխանները դեռ պետք է մշակվեն, ինչն իր հերթին նշանակում է, որ նոր ինքնության կամ հին ինքնության մասին պատկերացումների ճշտում պետք է տեղի ունենա, ինչը միշտ էլ վտանգավոր եւ բարդ գործընթաց է:

Համաձայն Ս.Յանտինգտոնի, ինքնության որոնումների մեջ է շարունակում մնալ Միացյալ Նահանգները: Գիտնականն այսպես է բնորոշում ամերիկյան հասարակության առջեւ կանգնած սույն խնդիրը. «Ամերիկյան դառնում է աշխարհ: Աշխարհը դառնում է Ամերիկա: Ամերիկյան շարունակում է մնալ Ամերիկա: Կոսմոպոլիտակա՞ն: Կայսերակա՞ն: Ազգայնակա՞ն: Ամերիկացիները պետք է կատարեն ընտրություն, որը կորոշի եւ ազգի ճակատագիրը, եւ ամբողջ աշխարհի ճակատագիրը»:

Սակայն արդյո՞ք ինքնության խնդիրն է, որ ճգնաժամային նշանակություն ունեցավ վերջին տարիների ամերիկյան քաղաքականության համար եւ ի վերջո հանգեցրեց իշխող հանրապետական կուսակցության ծանր պարտությանը անցած աշնանը կայացած ընտրություններում: Ամերիկյան ընտրողն իր քվեարկությամբ հստակորեն հայտարարեց այն մասին, որ հավանություն չի տալիս հանրապետական վարչակազմի հատկապես այն արտաքին քաղաքական մոտեցումներին, որոնք ակնհայտորեն հակասության մեջ են մտնում հասարակության մեծամասնության դավանած արժեքների հետ: Այսինքն՝ հարցը ոչ թե հասարակության ինքնության կորուստն է եւ նորի որոնումները (այստեղ միջին ամերիկացին խնդիրներ չունի, նա շարունակում է հպարտանալ իր երկրով եւ համարել, որ ապրում է ամենաարդար հասարակության մեջ), այլ ամերիկացիների համար արդեն ավանդական դարձած ունիվերսալիզմի եւ մեկուսացման միջեւ ընտրություն կատարելը: Ս.Յանտինգտոնի նշած տարբերակներից միայն մեկն է, որ իրական է՝ կայսերական լինելը, որովհետեւ ցանկացած այլ լուծում կհանգեցնի պետության քայքայմանը:

Ամերիկացիները ձգտում են պահպանել իրենց դերն աշխարհում, սակայն համաձայն չեն այն գնի հետ, որը հանրապետական վարչակազմը ստիպում է նրանց վճարել դրա համար: Իրաքյան պատերազմը, որը շատերի կողմից արդեն իսկ գնահատվում է որպես «նոր Վիետնամ»,

իրականում քիչ համեմատության եզրեր ունի վերջինիս հետ, հատկապես հետեւանքների տեսակետից:

Հարցը միայն այն չէ, որ Վիետնամի պատերազմը սառը պատերազմի դրսեւորումներից մեկն էր եւ տեղի էր ունենում հստակ երկբեւեռության պայմաններում, ուստի պարտվելը նշանակում էր ակնհայտ հակառակորդին՝ Խորհրդային Միությանը դիրքեր զիջել: Հիմնական տարբերությունն այն է, որ Միացյալ Նահանգները բոլորովին այս պատերազմի կարիքը չուներ, այն չէր կարող երկրի՝ որպես համաշխարհային առաջատարի, դիրքն ավելի ամրապնդել կամ տնտեսական մրցակցության մեջ ավելի առաջ մղել: Այս իրողության գիտակցումն աստիճանաբար ավելի ու ավելի է արմատանում հասարակության գիտակցության մեջ:

«Ունիվերսալի՞զմ, թե՞ մեկուսացում» ավանդական հարցն այս ենթատեքստում ստանում է նոր ձեւակերպում. հարկավո՞ր է արդյոք Ամերիկային միանձնյա պատասխանատվություն, թե՞ այն պետք է բաժանել մյուս երկրների (անշուշտ, Միացյալ Նահանգների կողմից նախընտրելի) հետ: Սա է այն ընտրությունը, որը պետք է կատարի Ամերիկան հերթական նախընտրական գործընթացների շրջանում: Հասկանալի է, որ այս անգամ ընտրությունը շատ ավելի բարդ է լինելու, քան նույնիսկ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, քանի որ չկան ընդգծված թշնամի եւ շոշափելի նպատակ: Միջազգային ահաբեկչության դեմ հայտարարված պատերազմը չի ընկալվում որպես այդպիսին, այսինքն՝ որպես պատերազմ, իսկ թշնամու կերպարը հստակ եւ հասկանալի չէ:

Վերջապես, գլոբալիզացիայի գործընթացները հանգեցրել են այնպիսի իրավիճակի, որ 1953թ. «Ջեներալ Մոթորս» ընկերության նախագահի այն խոսքերը, թե «այն, ինչ լավ է «Ջեներալ Մոթորսի» համար, լավ է Ամերիկայի համար», ներկայումս կարող են առաջացնել ոչ թե խիստ քննադատություն, ինչպես եղավ 50 տարի առաջ, այլ՝ քնծիծաղ, քանի որ ժամանակակից վերազգային ընկերությունների շահերը, բնականաբար, ոչ միայն չեն համընկնում պետական շահերի հետ, այլեւ շատ հաճախ հակասում են դրանց: Եթե պատերազմը ծառայում է պետական շահերին, ապա դա մի հարց է, սակայն միջին ամերիկացին, որն այսօր մեկ գալոն բենզինի համար վճարում է գրեթե կրկնապատիկ գին՝ 10 տարի առաջ եղած գների համեմատ, խիստ կասկածներ ունի պատերազմի իրական նպատակների վերաբերյալ:

Ամերիկյան կայսերականությունը հիմնվում է ամերիկյան նացիոնալիզմի վրա, որն իր էությամբ հակադրվում է ցանցերին, այդ թվում՝ նաեւ վերազգային ընկերություններին: Այս հակասությունը վերացնելը դժվար

կազմության մեջ է դնում ամերիկյան հասարակությունը: Հարցը բարդանում է այն հանգամանքի պատճառով, որ համաշխարհային կայսրություններն իրենց համակարգում ունեն ցանցերին հատուկ տարրեր, ինչը խնդրի լուծումը դարձնում է կամ ժամանակավոր, կամ ընդհանրապես անհնար:

Գազանավթային «պատերազմները» մոտեցնում են Ռուսաստանը այն սկզբունքային ընտրությունը կատարելու պահին, որի մասին կարելի է ասել «Ջեներալ Մոթորսի» նախագահի՝ վերը բերած խոսքերը վերափոխելով՝ «արդյո՞ք այն, ինչ լավ է «Գազպրոմի» համար, լավ է Ռուսաստանի համար»: Այս ընտրության անխուսափելիությունը հարցականի տակ է դնում բազմիցս հրապարակված կարծիքն այն մասին, թե գաղափարական ոլորտում ռուսներն իրենց ընտրությունը կատարել են եւ դա ազգայնականությունն է: Հատկապես Բելառուսի հետ կապված վերջին իրադարձությունները բացահայտում են այն, որ մոսկովյան քաղաքականությունը դեռեւս խարխափում է եւ իր հստակ ու հաստատ ճանապարհը չի գտել:

Վերը ձեւակերպված հարցերի պատասխանները մեծապես կանխորոշում են նաեւ Հայաստանի կատարելիք ընտրությունը, որի միայն աղոտ գծագիրն է ներկայումս նշմարվում, եւ որի հստակեցումը կախված է նրանից, թե որքանով մենք կկարողանանք վերլուծել ու հասկանալ հարցերին տրվելիք հնարավոր պատասխանները:

**ՌՈՒՍԱՍՏԱՆ-ԲԵՆԼԱՌՈՒՄ.
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃԳՆԱԺԱՄ
Սեւակ Սարուխանյան**

Ռուսական ընկերությունների՝ Բելառուսին մատակարարվող գազի գները վերանայելու մասին որոշումը հանգեցրեց Ռուսաստան—Բելառուս հարաբերությունների ամենանշանակալի ճգնաժամին: Այս ճգնաժամն, իր բոլոր դրսևորումներով, ՌԴ ղեկավարության՝ Բելառուսի նկատմամբ վարվող քաղաքական նոր գծի իրագործման արդյունք է:

Բելառուսի նկատմամբ ռուսական նոր գծի իրագործումը, հիմնականում, Միմսկի հետ միասնական պետության կառուցման քաղաքականության տապալման հետեւանք է: Սա բավական կարեւոր է, քանի որ հենց այս հիմնախնդիրն է տարբերում Բելառուսի նկատմամբ Ռուսաստանի էներգետիկ քաղաքականության նպատակներն այն նպատակներից, որոնք տեղ էին գտել Ուկրաինայի, Մոլդովայի, Ադրբեյջանի, Վրաստանի եւ մասամբ Հայաստանի հետ Ռուսաստանի հարաբերություններում: Փաստորեն, Ռուսաստանի «էներգետիկ դիվանագիտության» թիրախ դարձավ մի պետություն, որը բազմաթիվ թելերով կապված է Ռուսաստանի հետ, նրա ռազմավարական դաշնակիցն է եւ արտաքին քաղաքական դաշտում ունի ակնհայտ ռուսամետ դիրքորոշում:

Բելառուսն առաջին պետությունն է, ում նկատմամբ կիրառվող «էներգետիկ դիվանագիտությունը» բացարձակապես կախված չէր ռուսական գազ գնող պետության արտաքին քաղաքականությունից, ինչը նկատվել էր ՌԴ—Ուկրաինա, ՌԴ—Վրաստան, ՌԴ—Հայաստան (Հայաստանի պարագայում ՌԴ-ի հետ ռազմավարական դաշինքը համեմատաբար ցածր մակարդակի վրա պահեց գազի գները) հարաբերություններում: Ռուս-բելառուսական էներգետիկ ճգնաժամը նոր երեւոյթ է ռուսական արտաքին քաղաքականության մեջ, որը կարելի է մեկնաբանել Ռուսաստանի՝ որպես համաշխարհային քաղաքականություն «գերտերության» վերադարձի գործընթացի տերմիններով: Ռուսաստան-«գերտերության»՝ նախկին ԽՍՀՄ տարածաշրջանում վարվող քաղաքականության հիմնական բաղադրատարրերը պայմանականորեն հանդիսանում են.

❖ անհնազանդներին եւ «օտարամուլներին» պատժելը (Ուկրաինա, Մոլդովա, Վրաստան, Ադրբեջան),

❖ ռազմավարական դաշնակիցների տարածաշրջանային կամ գլոբալ նշանակության ձեռնարկությունների, հիմնականում՝ էներգետիկ, նկատմամբ բացարձակ վերահսկողություն հաստատելը (էներգետիկ ակտիվներ Բելառուսում եւ Հայաստանում, ուրանի հանքեր Ղրղզստանում, գազի պաշարներ Ուզբեկստանում):

Դժվար է ասել, թե ինչի կհանգեցնի «անհնազանդների» նկատմամբ վարվող քաղաքականությունը, սակայն երկրորդ խմբի պետությունների նկատմամբ իրագործվող քաղաքական գիծն առաջին հերթին պետք է որ հանգեցնի դրանց տնտեսաքաղաքական կախվածությանը Ռուսաստանից: Սակայն նման եզրակացությունն անվիճելի համարվել չի կարող, եւ այս դեպքում բավական կարելու է հենց Բելառուսի օրինակը:

ՌԴ «դաշնակցի» եւ «զոհի» արանքում

Միայն տեղեկատվական դաշտում տեղ գտած վերլուծություններն ու գնահատականները բավական են՝ հասկանալու համար, որ Բելառուսն ավելի քան շոտլանդացի է օգտվում ՌԴ-ից ներկրվող էներգակիրներից եւ դրանց ցածր գներից: Միայն ռուսական նավթի վերամշակման արդյունքում Բելառուսը տարեկան ստանում է ավելի քան \$1 մլրդ-ի շահույթ: Ի դեպ, անցած տարվա ռուս-ուկրաինական «գազային պատերազմի» ժամանակ Միոսկը ցածր գներով գնվող ռուսական գազը մասամբ ուղղում էր դեպի Ուկրաինա՝ փաստորեն հակասելով իր ռազմավարական դաշնակցի շահերին:

Ակնհայտ է, որ ընդհանուր պետության կառուցման հայեցակարգը վերջին տասնամյակի ընթացքում բելառուսական կողմը հաջողությամբ օգտագործել է ՌԴ-ից համապատասխան տնտեսական արտոնություններ ստանալու համար: Բելառուսի ինքնիշխանության սահմանափակման հաշվին Ռուսաստանն ու Բելառուսը վերամիավորելու Ա.Լուկաշենկոյի պատրաստակամությունից գրեթե ոչինչ այսօր չի մնացել: Այս պատրաստակամության թուլացումն ակնհայտ էր արդեն յոթ տարի առաջ, երբ ելցինյան քառսային իշխանությունը փոխարինվեց պուտինյան ուժեղ վարչակազմով՝ դրանով իսկ զրոյացնելով Ա.Լուկաշենկոյի՝ միավորված Ռուսաստանի եւ Բելառուսի նախագահ դառնալու շանսերը: Հենց այդ պահից ռուս-բելառուսական դաշինքը առաջին ճեղքվածքը տվեց՝ դառնալով ընդամենը Ռուսաստանից տնտեսական հատուկ պայմանների կորզման բարոյահոգեբանական հիմք:

Միակ ուղղությունը, որով ակտիվորեն զարգանում է ռուս-բելառուսական համագործակցությունը, ռազմական ոլորտն է: Վիճելի կարելի է համարել այն թեզը, որ այդ համագործակցությունն ավելի կարելոր է Ռուսաստանի, քան Բելառուսի համար: ՌԴ-ի հետ ռազմական համագործակցությունը մասամբ բխում է Արեւմուտքի հետ Մինսկի լարված հարաբերություններից: ՌԴ-ի հետ ռազմական դաշինքը կարելոր գործոն է Բելառուսի ներքաղաքական դաշտում. ռուս-բելառուսական ռազմաքաղաքական դաշինքը Արեւմուտքին թույլ չի տա ներգրավվել եւ ազդել ներբելառուսական քաղաքական գործընթացների վրա ոչ ավելի, քան քաղաքական կուսակցությունների եւ հասարակական կազմակերպությունների ֆինանսավորումն է կամ ԱՄՆ Պետդեպարտամենտի հայտարարությունները Ա.Լուկաշենկոյի ոչ ժողովրդավարական քաղաքականության մասին:

Բելառուսի արտաքին քաղաքական անկախությունը, տնտեսական եւ սոցիալական կայունությունը, Ա.Լուկաշենկոյի վարչակազմի ամրությունն ու հզորությունը հիմնականում Ռուսաստանի կողմից Բելառուսին անուղղակի տնտեսական, քաղաքական աջակցության եւ օգնության արդյունք են: Իհարկե, այս ամենում մեծ է նաեւ Բելառուսի ղեկավարի քաղաքական հմտությունը:

Ինչ վերաբերում է Բելառուսի հետ դաշնային համագործակցությունից Ռուսաստանի ունեցած ակնկալիքներին, ապա այստեղ խնդիրներն ավելի շատ են: Նշենք հիմնականները.

1. Բելառուսը չի մտել ռուբլու գոտի,

2. երկիրն օգտագործում է Ռուսաստանի հետ սահմանի բացակայությունը տարանցման շահարկումների համար: Միայն անցած տարի Բելառուսից ավելի քան \$1 մլրդ արժողությամբ վրացական եւ մոլդովական գինի է ներկրվել ՌԴ,

3. Բելառուսը մերժում է «Բելտրանսգազի» գնման մասին «Գազպրոմի» բոլոր առաջարկությունները,

4. ռուսական կապիտալի մուտքը Բելառուս, ըստ ՌԴ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության, սահմանափակված է: Ռուսական ներդրումներն ավելի շատ ողջունվում են ԵՄ եւ ՆԱՏՕ անդամ երկրներ հանդիսացող Լատվիայում, Էստոնիայում, քան Բելառուսում:

Ինչեւէ, որոշ վերապահումներով կարելի է ասել, որ Ռուսաստան-Բելառուս դաշինքի ստեղծման արդյունքում Ռուսաստանը վերածվել է, այսպես ասած, «կթան կովի», ինչով էլ պայմանավորված են «տնտեսական հրաշքը» եւ ներքաղաքական աննախադեպ կայունությունը Բելառուսում:

Հավանաբար, հենց այս կարգավիճակի վերացմանն էր ուղղված Ռուսաստանի ղեկավարության որոշումը Բելառուսի նկատմամբ քաղաքականության ավելի կոշտ գծի անցնելու վերաբերյալ: Թե որքանով է գրագետ եւ խելացի այս նոր գծի իրագործման սկիզբը՝ արդեն ռուսական ներքաղաքական գործընթացին վերաբերող խնդիր է:

Բելառուսի հետ էներգետիկ ճգնաժամը, ռուսական նավթի՝ ԵՄ արտահանման կասեցումը եւ եվրոպական ղեկավարների կոշտ հայտարարություններն ակնհայտ դարձրին, որ ԵՄ-ի համար կարելուրդ ոչ թե ավտորիտար Լուկաշենկոյի դիրքերի թուլացումն է, այլ սեփական էներգետիկ անվտանգությունը:

Ռուսաստան—Բելառուս հարաբերություններում նկատվող ճգնաժամը, փաստորեն, միջպետական հարաբերությունների ռացիոնալացման արդյունք է: Այս գործընթացը վերացնելու է «Բելառուս՝ Ռուսաստանի դաշնակից» եւ «Բելառուս՝ Ռուսաստանի զոհ» գնահատականների հակասությունը եւ, հավանաբար, հանգեցնելու է ռուս-բելառուսական հարաբերությունների «դազախականացման», ինչը ենթադրում է բարիդրացիական հարաբերություններ Մոսկվայի եւ Մինսկի միջեւ, բայց նաեւ Մինսկի արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացում: Իհարկե, Մինսկն այս գործընթացում այնպիսի հաջողություն չի ունենա, ինչպես նավթագազային հսկայական ռեսուրսների տիրապետող Աստանան:

Վերջաբանի փոխարեն

Հունվարի 14-ին Բելառուսի նախագահ Ա.Լուկաշենկոն մամուլի ասուլիսում հայտարարեց. *«Թող Եվրոպան Բելառուսին ասի «շնորհակալություն»: Նրանք շատ բան հասկացան այս հակամարտությունից հետո... Պետք է ասեն, որ թե՛ ԱՄՆ-ը, թե՛ Եվրոպան իրենց շատ բարեկիրթ պահեցին այս իրավիճակում: Նրանք մեզ առաջարկեցին օգնություն եւ աջակցություն, եթե դա պետք լի՞նի բելառուսական ժողովրդին: Մենք դա երբեք չենք մոռանա»:*

Այս հայտարարությունը նոր խոսք է Բելառուս—Արեւմուտք հարաբերություններում: Ե՛վ Արեւմուտքը, ե՛ւ Բելառուսը կարող են միմյանց համար նպաստավոր պայմաններ ստեղծել Ռուսաստանի հետ հարաբերություններում: Սակայն, հաշվի առնելով Բելառուսի տնտեսության եւ էներգետիկայի գրեթե բացարձակ կախվածությունը Ռուսաստանից, դժվար թե կարելի է խոսել Բելառուսի մոտակա արեւմտականացման մասին:

ԱՄՆ ԱՐՏԱՔԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ

Սուրեն Սարյան

ԱՄՆ Կոնգրեսի վերջին ընտրությունները, Բուշի վարչակազմում կադրային տեղափոխումները եւ ամերիկյան ապագա ռազմավարության շուրջ քննարկումները փաստում են, որ նեոպահպանողականների «աստեղային ժամն» անցել է:

Խաղարկելով Իրաքի քարտը՝ դեմոկրատները հաղթեցին Կոնգրեսի ընտրություններում, իսկ Բուշի վարչակազմում նեոպահպանողական մոտեցումների կողմնակիցներն, ինչպես Փոլ Վուլֆովիցը, Ռիչարդ Փերլը, Դուգլաս Ֆեյթը, Լյուիս Լիբին, իսկ վերջերս էլ՝ Դոնալդ Ռամսֆելդը եւ Ջոն Բոլթոնը, թողեցին իրենց պաշտոնները եւ փոխարինվեցին չափավոր մոտեցումների կողմնակիցներով: Ռամսֆելդն ու Բոլթոնը փաստորեն «զոհաբերվեցին» դեմոկրատների հաղթանակից հետո, քանզի հենց նրանք էին առավել շատ ասոցացվում ամերիկյան արտաքին քաղաքականության ձախողումների հետ:

Փաստորեն այսօր Բուշ-կրտսերի վարչակազմը զիջել է իր տեղը Բուշ-ավագի վարչակազմում առանցքային դերակատարում ունեցող ավելի իրատեսական գործիչներին: Այսուհետ ամերիկյան քաղաքականությունը, ըստ էության, ղեկավարելու են Բուշ-ավագի վարչակազմի երկու առանցքային դեմքերը՝ նախկին պետքարտուղար Ջեյմս Բեյքերը եւ ԿՀՎ-ի նախկին տնօրեն, այժմ պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսը:

ԱՄՆ-ում այժմ ամենուր քննարկում են, թե ինչպիսին է լինելու ամերիկյան արտաքին քաղաքական ռազմավարությունը Բուշից հետո: Քննարկումները հիմնականում հանգում են երկու սցենարների: Առաջինի համաձայն՝ պետք է վերականգնել քլինթոնյան արտաքին քաղաքականությունը՝ գլոբալացման եւ ժողովրդավարացման շարունակման նշանաբաններով (այսպես կոչված, Օլբրայթի — Յոլբրուքի գիծ):

Երկրորդ մոտեցումը ենթադրում է «օֆշորային հավասարակշռում», որի դեպքում տարբեր տարածաշրջաններում ԱՄՆ-ը պետք է տարբեր տիպի քաղաքականություն վարի՝ հիմնվելով նախ եւ առաջ ուժերի հավասարակշռության սկզբունքի կիրառման վրա (Բեյքերի գիծ): Այդ ռազմավարության համաձայն՝ Միացյալ Նահանգներն օգտագործում է իր ուժը մոլորակի ընտրովի տարածաշրջաններում, որոնք ունեն կենսական կարեւորություն ԱՄՆ-ի համար եւ որոնց համար արժե

պայքարել: Տնտեսական հզորության եւ բնական պաշարների ապահովման տեսանկյունից այդպիսին են համարվում Եվրոպան, Արեւելյան Ասիան եւ Պարսից ծոցը:

Սակայն այդ տարածաշրջանների նկատմամբ ուղղակի վերահսկողություն սահմանելու փոխարեն ԱՄՆ-ը պետք է պարզապես երաշխավորի, որ դրանք չընկնեն որեւէ մրցակից տերության հսկողության տակ: Այդ նպատակով տվյալ հայեցակարգի կողմնակիցների կողմից առաջարկվում է ապավինել տեղական տարածաշրջանային խաղացողներին, որոնք պետք է ապահովեն տարածաշրջանային հավասարակշռությունը:

Նման ռազմավարությունը, փաստորեն, մի կողմից՝ ապահովում է ամերիկյան գերիշխանությունն աշխարհում, իսկ մյուս կողմից՝ ապահովագրում է միակ համաշխարհային գերտերությանը այդ գերիշխանության օգտագործումից բխող ռիսկերից:

Մինչդեռ ամերիկյան հեգեմոնիայի ներկա իրականացնողներն այդպես էլ չեն կարողանում հստակ ձեւակերպել ԱՄՆ-ի ռազմավարության վերջնական խնդիրները. օրինակ՝ ի՞նչ է նշանակում հաղթանակն Իրաքում, ի՞նչ է տալու զորքերի լրացուցիչ ավելացումն այնտեղ: Կանգնեցնել միջկրոնական բախումներն Իրաքում եւ տարածաշրջանում այլեւս հնարավոր չէ, քանի որ այն տարածաշրջանին բնորոշ հիմնական միտումն է վերջին տասնչորս դարերի ընթացքում: Ավելին, հենց այդ բախման ծավալումը կարող է լինել ամերիկյան ռազմավարության նպատակը, քանի որ դրա միջոցով իսլամական աշխարհը, որն այսպես թե այնպես Արեւմուտքի դեմ իր «սրբազան պատերազմն» է վարում, էականորեն թուլացնում է իրեն: Ասել է թե՛ ստեղծվում է սառը պատերազմի վերջին փուլերի նման իրավիճակ, երբ Նիքսոնի, Քիսինջերի, Ֆորդի, Քարթերի եւ Բժեզինսկու ջանքերով հաջողվեց սեպ խրել կոմունիստական ճամբարի երկու հսկաների՝ Չինաստանի եւ Խորհրդային Միության միջեւ: Դրա արդյունքում վիետնամական պարտությունը չունեցավ ԱՄՆ-ի ռազմավարական եւ աշխարհաքաղաքական հզորության համար կտրուկ հետեւանքներ, իսկ Չինաստանը դարձավ կայունացման գործոն Արեւելյան Ասիայում՝ ինքն ապրելով զգալի փոխակերպում:

Այսօր որպես յուրատեսակ «Չինաստան» արեւմտյան ստրատեգները հակված են դիտել շիաներին՝ Իրանի առաջնորդությամբ, եւ այդ է պատճառը, որ Իրանին ու ընդհանրապես շիաներին տրվում են լավ հնարավորություններ՝ ամրապնդելու սեփական դիրքերն ամբողջ տարածաշրջանում, ինչը եւ մենք տեսնում ենք Իրաքում, Լիբանանում, Պաղեստինում: Նույն Բժեզինսկին ուղղակի առաջարկում է ԱՄՆ

վարչակազմին՝ գրավ դնել քրդական ինքնավարության եւ շիա հոգեւորականության վրա, որոնք ունակ են ապահովել Իրաքի կայունացումը: Դրա համար «Վաշինգտոնը պետք է պատրաստվի Իրանի հետ բազմաբնույթ բանակցությունների»:

Դա նշանակում է, որ, եթե Թեհրանը ցուցաբերի համարժեք ընկալում, Արեւմուտքը կհաշտվի իրանական միջուկային ծրագրի հետ, իսկ Իրանը կհակադրվի սոււննիական արմատականության կենտրոններ դարձած Սաուդյան Արաբիային ու Պակիստանին եւ իր ավելի արդիական ու կրթված բնակչությանը կարող է դառնալ ամբողջ Մերձավոր եւ Միջին Արեւելքի արդիականացման շարժիչը:

Սոււննի—շիական հակամարտությունն իսկապես ռազմավարական շանս է ԱՄՆ-ի համար. այդպիսի հնարավորություն էր խորհրդա—չինական հակամարտությունը սառը պատերազմի ժամանակաշրջանում: Այսօր շիա—սոււննի հակադրության գլխավոր դերակատարներն են Սաուդյան Արաբիան եւ Իրանը, որոնց վարչակարգերը հանդիսանում են հակաարեւմտյան իսլամիստական շարժման հիմնական հովանավորները: Հետեւաբար, Մեծ Մերձավոր Արեւելքից հեռանալը ԱՄՆ-ի եւ ամբողջ Արեւմուտքի համար կնշանակի խոշորագույն ռազմավարական պարտություն՝ բոլոր հնարավոր բացասական հետեւանքներով:

Այս առումով հավանական է դառնում, որ Իրաքի քաոսային իրավիճակում ԱՄՆ-ը զորքերը կտեղափոխի Քրդստան: Ուղղակի ռազմական վերահսկողության սահմանումից խուսափելով (թեւ տարածաշրջանում ռազմական ուժի ներկայությունից վերջնական հրաժարում մենք չենք տեսնի)՝ ամերիկացիները փորձում են ձեւավորել իրար հակակշռող երկրների եռանկյունի՝ Իրան—Իսրայել—Սաուդյան Արաբիա, որոնց միջեւ մշտական միջնորդի եւ դատավորի դերում հանդես կգա հենց ԱՄՆ-ը:

Վերոհիշյալ սցենարներից որոնք կստանան հստակ քաղաքականության տեսք՝ կախված է հաջորդ տարի կայանալիք ԱՄՆ-ի նախագահական ընտրությունների արդյունքից: Դեռ պարզ չէ, թե ով կառաջնորդի դեմոկրատներին եւ հանրապետականներին 2008-ին, առավել եւս դժվար է գուշակել, թե ով կհաղթի այդ ընտրություններում: Դա կարող են լինել նախկին առաջին տիկին, սենատոր Հիլարի Բլինթոնը, սենատորներ Ջոն Էդվարդսը եւ Ջոն Մակքեյնը, Նյու Յորքի նախկին քաղաքապետ Ռուդոլֆ Ջուլիանին, նախկին պետքարտուղար Քոլին Փաուելը եւ այլոք:

Սակայն կարելի է արդեն ուրվագծել այն քաղաքականությունը, որը կվարեն դեմոկրատներն ու հանրապետականները 2008-ից հետո:

Դեմոկրատ նախագահի դեպքում ԱՄՆ-ը կվերադառնա արդեն

հիշատակված քլինթոնյան կամ «Օլբրայթի-Յոլբրոուքի» ուղեգծին: Այն ենթադրում է սերտ դաշինք Եվրոպայի հետ, Ռուսաստանի աշխարհաքաղաքական դիրքերի հետեւողական թուլացում, ՆԱՏՕ-ի եւ ԵՄ-ի հետ Ուկրաինայի, Մոլդովայի, Բելառուսի եւ Հարավային Կովկասի ինտեգրում, սերտ համագործակցություն իսլամական աշխարհի հետ, մասնավորապես՝ Իրանի հետ հարաբերությունների նորմալացում, Իրանի եւ Սիրիայի ներգրավում մերձավորարեւելյան գործընթացներում (ինչն արդեն առաջարկվել է ոչ միայն Բժեզինսկու, այլեւ «իրատես» հանրապետականներ Բեյքերի, Գեյթսի, Սքոուքրոֆթի կողմից) եւ այս համատեքստում Իսրայելի վրա ճնշում՝ պաղեստինցիներին զիջումներ անելու նպատակով:

Դեմոկրատական վարչակազմը դժվար թե որդեգրի «մեկուսացման» քաղաքականություն: Բավական է հիշել, որ հենց դեմոկրատ Քլինթոնն է եղել «գլոբալացման» կոնցեպտի ջատագովներից մեկը, ինչպես նաեւ ռազմական միջամտություններ իրականացրել Սոմալիում, Հաիթիում, Բոսնիայում, Կոսովոյում եւ ակտիվ դիվանագիտական ջանքեր գործադրել մերձավորարեւելյան հակամարտության կարգավորման գործում: Այդ գործողություններն իրականացվում էին Քլինթոնի կողմից հռչակված ԱՄՆ-ի՝ որպես միակ համաշխարհային գերտերության, ղեկավարման տակ աշխարհում ժողովրդավարության եւ լիբերալիզմի տարածման հայեցակարգի շրջանակներում:

Այդ կուրսը չէր հարուցում գլոբալ դիմադրություն, ռազմական ուժի կիրառումը սահմանափակ էր եւ իրականացվում էր մեծ մասամբ միջազգային կառույցների միջոցով, ինչպես 1991թ. Ծոցի առաջին պատերազմի ժամանակ կամ 1995թ. Բոսնիայի եւ 1999թ. Կոսովոյի պատերազմների ընթացքում:

Հանրապետականների հաղթանակի դեպքում Միացյալ Նահանգները վարելու է իր քաղաքականությունը ոչ թե ինչ-որ «ժողովրդավարական Մեծ Մերձավոր Արեւելքի» կայացման համար, այլ հանուն Միացյալ Նահանգների ազգային շահերի, քանի որ ամերիկյան քաղաքականությունը բոլոր ժամանակներում եղել է «ամերիկյան»:

Հանրապետականների իշխանության մնալու դեպքում ԱՄՆ—ԵՄ կապերի ամրապնդումը կշարունակվի, սակայն հանրապետականները հակված չեն ժխտելու Ռուսաստանի եւ Չինաստանի կողմից ինչ-որ ազդեցության գոտիներ կիսելու հնարավորությունը, մոտավորապես՝ այսօր հետխորհրդային տարածքում իշխող իրադրության նման:

Այդուհանդերձ, անկախ նրանից, թե ով է լինելու Սպիտակ տան ապագա տերը, ամերիկյան արտաքին ռազմավարության հիմնական ուղղությունը լինելու է ԱՄՆ-ի եւ Եվրոպայի միջեւ կապերի սերտացումը:

Արդեն Բուշի ներկայիս վարչակազմը գնաց Եվրոպայի հետ նոր մերձեցման՝ գիտակցելով, որ կարող է լրիվ մեկուսացված մնալ աշխարհում: Իսկ ԱՄՆ-ի միակ վստահելի եւ հզոր դաշնակիցը մնում է միայն Եվրոպան:

ԵՄ-ը նույնպես, որն այսօր գտնվում է ներքին խնորրումների եւ կարգավորումների ժամանակաշրջանում՝ կապված Եվրոպական Սահմանադրության ընդունման եւ հետագա ընդլայնման ընթացքի սառեցման հետ, զգում է եւ դեռ երկար ժամանակ զգալու է ամերիկյան հզորության կարիքը:

Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի վերջին ելույթները, ինչպես նաեւ Վաշինգտոն կատարած այցը եւս վկայում են ԱՄՆ-ի եւ Եվրոպայի միջեւ դիրքորոշումների մերձեցման մասին: Դա հատկապես վերաբերվում է էներգետիկ անվտանգության եւ առևտրի բնագավառներին, որտեղ վերջերս բանակցություններ են գնում արգելքների վերացման շուրջ, ինչի շնորհիվ հնարավոր է դառնում տրանսատլանտյան առևտրի ազատ գոտու ստեղծումը:

Եվրա-ամերիկյան ռազմավարության հատուկ ուշադրության կենտրոնն է լինելու Եվրոպայի արեւելքի կամ նախկին հետխորհրդային տարածքի «յուրացումը»: Դեռեւս Բիլ Բլինթոնի օրոք որդեգրվեց հետխորհրդային տարածքը որպես ամերիկյան կենսական շահերի ոլորտ դիտելու ուղեգիծը:

Այսօր արդեն կարելի է նկատել, թե ինչպես զգալիորեն աճել է Ռուսաստանի հասցեին ուղղված քննադատությունը ԱՄՆ-ում եւ Եվրոպայում՝ ռուսական ժողովրդավարության եւ ազատության ճնշումների, քաղաքական սպանությունների եւ հարեւան երկրների նկատմամբ նեոկոլոնիալական հավակնությունների դրսևորման կապակցությամբ:

Այն պայմաններում, երբ արեւմտյան քաղաքական եւ հասարակական արժեքներն ու գաղափարները չեն վայելում Մերձավոր եւ Միջին Արեւելքի ժողովուրդների աջակցությունը, նախկին հետխորհրդային տարածքը Արեւմուտքի համար մնում է քաղաքական հաջողության հասնելու միակ իրական հնարավորությունը: Եվրոպան եւ ԱՄՆ-ը պետք է հստակեցնեն իրենց քաղաքականությունն Ուկրաինայի, Բելառուսի եւ Զարավային Կովկասի ուղղությամբ, քանի որ նրանց անհրաժեշտ է «հաջողության պատմություն»: Այդ պատմությունը կերտելու համար որեւէ ավելի հարմար «տարածք» այլեւս չի մնացել, քանի որ Արեւմուտքից սպասելիքներ ունի այսօր միայն Եվրոպայի արեւելքը համարվող տարածությունը:

Այդ է պատճառը, որ Վաշինգտոնն ու Բրյուսելը գնում են Մոսկվայի հետ իրենց քաղաքականության կոշտացման: Կոնգրեսում իշխող

դեմոկրատների ղեկավարները եւ քլինթոնյան վարչակազմի առանցքային դեմքերը, ինչպես Ռիչարդ Յոլբրուքն ու Սթրոուք Թելբորը, կոչ են անում վերանայել Ռուսաստանի հետ հարաբերությունները, քանի որ Ռուսաստանն ավելի ու ավելի գլորվում է դեպի օլիգարխիա, իսկ ռուսական արտաքին քաղաքականությունն այսօր գնահատվում է որպես բոլոր հարցերում ամերիկյան եւ եվրոպական քաղաքականություններին հակադրվող: Այս պայմաններում ներկայումս ընթանում է Արեւմուտքի ռուսական քաղաքականության փոփոխության քարոզչական հիմնավորումը՝ արեւմտյան հանրային կարծիքի ուշադրությունը սեւեռելով Վ.Պուտինի քաղաքական հակառակորդների հետապնդումներին ու քաղաքական սպանություններին, Իրանի եւ Սիրիայի հետ Մոսկվայի սերտ համագործակցությանը, Վրաստանի դեմ կոշտ պատժամիջոցների կիրառմանը կամ հարեւանների դեմ վառելիքային շանտաժի քաղաքականությանը:

Թե՛ հանրապետականները, թե՛ դեմոկրատները հակված չեն լինելու թույլ տալ, որ Ուկրաինայի կամ Հարավային Կովկասի անվտանգության ապագան որոշվի Մոսկվայում: Սակայն դեմոկրատների Սպիտակ տուն գալու դեպքում ամերիկյան ռազմավարությունը Ռուսաստանի հանդեպ կդառնա էլ ավելի հարձակողական: Ամերիկյան ուղղակի կդառնա, եթե արդեն հիմա չի դառնում, եվրոպացիների ձեռքին մի մահակ, որով Արեւմուտքի եւ իր նախկին խորհրդային արբանյակների նկատմամբ չափազանց կոշտ դիրք բռնած Ռուսաստանին կհասցվեն ծանր հարվածներ:

Եվրոպացիներին արդեն մեկ անգամ հաջողվել է օգտվել ամերիկյան «մահակից», երբ 1990-ականներին ԵՄ-ը, առանձնապես՝ Գերմանիան, օգտագործեցին ամերիկյան հզորությունը Բալկաններից Ռուսաստանին դուրս հանելու եւ ՆԱՏՕ-ի ու ԵՄ-ի հաջող ընդլայնումն ապահովելու համար:

Ստացվում է, որ ինչպես XIX-XX դարերում Եվրոպան Միացյալ Նահանգների համար ուղի էր հարթում դեպի համաշխարհային գերտերության կարգավիճակ, այնպես էլ այսօր ԱՄՆ-ը աշխատելու է Եվրոպայի համար՝ միջազգային ասպարեզում նրա երբեմնի առաջնորդությունը վերականգնելու համար:

Հասկանալի է, որ ԱՄՆ-ում կան ուժեր, որոնք չեն ցանկանում դառնալ Եվրոպացիների ճանապարհ բացողը: Առավել պրագմատիկ քաղաքագետներն ու փորձագետները համարում են, որ ԱՄՆ-ի տնտեսական եւ ռազմական հզորության ապագան կապված է Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի հետ, ուստի, հանրապետականները, որոնց թվին է պատկանում նշյալ մոտեցման ջատագովների մեծ

մասը, իրենց հաղթանակի դեպքում կարող են ամերիկյան ռազմավարության ուշադրության կենտրոնը լրիվ տեղափոխել դեպի Չինաստան, Յնդկաստան եւ ճապոնիա՝ գերադասելով հենց այս տերությունների հետ ապահովել XXI դարը որպես ամերիկյան հզորության դար արձանագրելու խնդիրը, ինչպես ԱՄՆ-ը դա արեց XX դարում Եվրոպայի հետ համագործակցելով:

Բացի այդ, պետք է միշտ մտապահել, որ հաջորդ տասնամյակում Արեւմուտքի առջեւ խնդիր կա թույլ չտալ Ռուսաստանի «վասալացումը» Չինաստանից եւ մահմեդական աշխարհից՝ հաշվի առնելով Ռուսաստանի ժողովրդագրական միտումները եւ Չինաստանից տնտեսական ու ռազմաքաղաքական կախվածության աճը: Այդ պատճառով Արեւմուտքին անհրաժեշտ է վերջնականապես լուծել Մոսկվային իր քաղաքականության ուղեծրի մեջ ներառելու խնդիրը:

Այսպիսով, մոտակա տարիներին ԱՄՆ-ի ռազմավարությունն ուղղված է լինելու Եվրոպայի հետ միասնական ջանքերի գործադրմանը՝ եվրատալանտյան տարածության վերջնական միավորման եւ Սեւծովյան ավազանում ամրապնդման համար, Ռուսաստանի կայսրապաշտությունը վերջնականապես ճնշելու եւ նրա հետագա «եվրասիականացումը» (որը նշանակում է «չինականացում» եւ «իսլամականացում») կանխելու, Մեծ Մերձավոր Արեւելքում Իսրայել—Սաուդյան Արաբիա—Իրան հակակշիռների եռանկյունին կազմելու եւ դրանում ամերիկյան դիրքերը կենտրոնական պահելու քաղաքականությանը:

ԻՐԱՔՅԱՆ ԹՆՋՈՒԿ

Արաքս Փաշայան

2006թ. դեկտեմբերի 6-ին Իրաքի ուսումնասիրության խումբը (Iraq Study Group, ստեղծվել է Կոնգրեսի որոշմամբ՝ 2006թ. մարտին), որն առավել հայտնի է իբրև Բեյքեր—Յամիլթոն հանձնախումբ, նախագահ Ջ.Բուշին ներկայացրեց այդ երկրի վերաբերյալ իր զեկույցը: Դրանում ներկայացված 79 առաջարկների իրականացումը, ըստ հանձնախմբի, կարող է կայունացնել իրավիճակն Իրաքում:

Յամաձայն փաստաթղթի, իրավիճակն Իրաքում վատթարանում է՝ սպառնալով վերաճել համընդհանուր քաոսի, անիշխանության եւ հումանիտար ճգնաժամի: Յանձնախումբն ամերիկյան վարչակազմին առաջարկում է Իրաքում եւ տարածաշրջանում գործադրել դիվանագիտական ու քաղաքական նոր ջանքեր, ինչպես նաեւ իրականացնել Իրաքում ամերիկյան զինված ուժերի գործառույթների փոփոխություն: Ամերիկյան բանակը (որի թիվը կարիք ունի ավելացման) պետք է ուսուցանի եւ մարզի իրաքյան բանակը, որը պետք է կարողանա իր վրա վերցնել ռազմական գործողությունների վարումը:

Բեյքեր—Յամիլթոն հանձնախմբի ամենակարեւոր հանձնարարականներից մեկն իրաքյան խնդրի լուծման հարցում Իրանի ու Սիրիայի հատուկ դերակատարությունն է: Ձեկույցի հեղինակները Իրաքում իրավիճակի կայունացման տեսանկյունից կարելուում են նաեւ արաբա-իսրայելական հակամարտության կարգավորման ուղղությամբ ԱՄՆ-ի քաղաքականության ակտիվացումը՝ դրա մեջ ներառելով պաղեստինյան եւ սիրիական ուղղությունները:

Յանձնարարականների կատարումը, ըստ զեկույցի հեղինակների, պայմաններ կստեղծի, որպեսզի 2008-ի առաջին քառորդին հնարավոր լինի ամերիկյան զինուժն ընդհանուր առմամբ դուրս բերել երկրից:

Պաշտոնական Վաշինգտոնն արդեն հայտարարել է, որ չի ցանկանում Իրաքի շուրջ երկխոսության մեջ ներառել Իրանը եւ Սիրիան՝ Իրանի պարագայում մատնանշելով վերջինիս միջուկային ծրագիրը, իսկ Սիրիայի պարագայում՝ Լիբանանին առնչվող հանգամանքները:

Ընդհանուր առմամբ, Սպիտակ տան քայլերն՝ ուղղված Իրաքում իրավիճակը կայունացնելուն, արդյունավետ չեն: ԱՄՆ-ի իրաքյան քաղաքականությանը վերաբերող դիսկուրսում հնչում են տեսակետներ այն մասին, որ ամերիկյան վարչակազմն ավելի շատ փորձում է

տակտիկական, քան հայեցակարգային փոփոխություններ կատարել: Ասվածի ապացույցն է 2005թ. դեկտեմբերի 30-ին Իրաքի նախկին առաջնորդ Ս.Յուսեյնի մահապատիժը, որը հոկտեմբերին իրաքյան դատարանի կողմից մեղավոր էր ճանաչվել՝ 1982-ին Ալ-Դուջեյլ գյուղում 148 շիաների սպանության համար: Ս.Յուսեյնի մահապատիժը մեծ աղմուկ առաջացրեց Իրաքում եւ միջազգային տարբեր շրջանակներում՝ երբեմն հակոտնյա գնահատականների տեղիք տալով: Սաուդյան Արաբիան, ինչպես նաեւ իսլամական այլ երկրներ ու գործիչներ տարակուսանք են արտահայտել մահապատիժն իսլամական ամենամեծ եւ սրբազան տոներից մեկի՝ Իդ Ալ-Ադիայի (կամ Կուրբան-բայրամի) ընթացքում իրականացնելու համար, ինչն անթույլատրելի է իսլամի տեսանկյունից: Միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները, նաեւ Եվրամիության մի շարք երկրներ, ՄԱԿ-ը, ՌԴ-ն Ս.Յուսեյնի մահապատիժը համարել են մեծագույն սխալ եւ դատապարտել այն: Ս.Յուսեյնի մահապատիժը գոհունակությամբ են ընդունել Իրանը, Իրաքի քրդերն ու շիաները:

Ամերիկյան վարչակազմի եւ իրաքյան իշխանությունների այն հավաստիացումները, թե Ս.Յուսեյնի մահապատիժը կնպաստի Իրաքի միասնությանը եւ վերջ կդնի Իրաքի պատմության մութ ժամանակներին, անհիմն են, եւ դա ապացուցվեց մահապատիժն հաջորդած եւ սուննիների իրականացրած ահաբեկչությունների շղթայով: Առաջին պայթյունն արձանագրվեց դեկտեմբերի 30-ի հենց առավոտյան, շիաների սրբատեղի համարվող Քուֆա քաղաքի շուկաներից մեկում:

Իրաքյան հետագա գործընթացների տեսանկյունից ուշագրավ է 2007-ի հունվարի 10-ին նախագահ Ջ.Բուշի ծրագրային ելույթը Իրաքում ԱՄՆ-ի վարչակազմի նոր ռազմավարության մասին, որը, վերջինիս խոսքերով ասած, ոչ միայն նպատակ ունի կայունացնել իրավիճակը տարածաշրջանում, այլեւ դառնալ կարեւոր հանգրվան միջազգային ահաբեկչության դեմ պայքարում:

Ծրագրի ամենակարեւոր կողմերից մեկն իրաքյան քաղաքականության մեջ ամերիկյան կողմի սխալների ու բացթողումների մասին Բուշի դիտարկումն էր եւ հիմնական մեղքի բաժինն իր վրա վերցնելը: Բուշն այդ երկրում իրավիճակի կայունացմանը խոչընդոտող երկու պատճառ առանձնացրեց՝ զինվորականության պակասը եւ ամերիկյան հրամանատարության՝ գործելու ոչ բավարար ազատությունը: Այդ իսկ պատճառով Իրաքում ամերիկյան համակազմն ավելանալու է ավելի քան 20 հազար զինվորականներով: Բացի այդ, լրացուցիչ միջոցներ պետք է ներդրվեն՝ կասեցնելու գրոհայինների մուտքը հարեւան երկրներից:

2007-ին երկրի անվտանգության հիմնական երաշխավոր պետք է լինի իրաքյան կառավարությունը, իսկ Բաղդադի ինը շրջանները պետք է անցնեն իրաքյան 18 բանակային եւ ոստիկանական բրիգադների հսկողությանը:

Միաժամանակ, ԱՄՆ նախագահը հասկացնել տվեց, որ Նուրի Ալ-Մալիքիի կառավարությունը չպետք է փորձարկի իրենց համբերությունը, եւ եթե չկարողանա կատարել իր վրա դրված պարտականությունները, մասնավորապես՝ ապառազմականացնել սուլեյմի եւ շիա ռազմական խմբավորումներին, ապա կգրկվի ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ իրաքյան ժողովրդի աջակցությունից: ԱՄՆ նախկին պետքարտուղար Յ.Քիսինջերի կարծիքով՝ իրաքյան կառավարությունը երբեք չի կարող կասեցնել քաղաքացիական պատերազմն ու միջդավանական բախումները, իսկ դա նշանակում է, որ այդ երկրում հետագա զարգացումները կայունության չեն հանգեցնելու:

Բուշի կարծիքով՝ ներկա փուլում Իրաքից հեռանալը հղի է այդ երկրի համար կործանարար հետեւանքներով, ինչը հաստատում է նաեւ փորձագիտական հանրությունը: Բուշը չի թաքցնում, որ նոր ռազմավարության խստագույն իրականացման դեպքում անգամ անհնար է հասնել շուտափույթ եւ դյուրին հաղթանակի: 2006-ի դեկտեմբերի վերջին Պենտագոնի նոր ղեկավար Ռոբերտ Գեյթսը Սենատի պաշտպանության հանձնաժողովի լսումների ժամանակ նույնիսկ հայտարարեց. «Մենք չենք հաղթում, բայց եւ չենք պարտվում»: Այս ձեւակերպումը հակասում է 2006թ. նոյեմբերին Կոնգրեսի միջանկյալ ընտրությունների նախօրեին Իրաքի մասին Բուշի հաշվետվության մեջ տեղ գտած «Մենք, անկասկած, կհաղթենք» ձեւակերպմանը: The Washington Post-ին տված հարցազրույցում Ջ.Բուշն ընդգծում է, որ պառլամենտական ընտրություններում հանրապետականների պարտությունը գնահատում է ոչ թե Իրաքում ամերիկյան ներկայությունն ընդհատելու, այլ՝ որպես ճգնաժամից նոր ուղիներ գտնելու անհրաժեշտություն:

Չունվարյան ելույթում Ջ.Բուշն իր երկրի քաղաքացիներին տեղեկացրեց, որ իրենց սպասվում է ծանր տարի, որը կհանգեցնի նորանոր զոհերի ինչպես իրաքյան բնակչության, այնպես էլ ամերիկացի զինծառայողների շրջանում:

Բացի ռազմական ծրագրից, Բուշն առաջ քաշեց նաեւ տնտեսական ծրագրեր. ԱՄՆ-ը պատրաստվում է շուրջ 10 միլիարդ ԱՄՆ դոլար ներդնել՝ Իրաքում ենթակառուցվածքների վերականգնման եւ նոր աշխատատեղերի ստեղծման համար:

Ամերիկյան հայտնի քաղաքագետ Ջ.Բեզիսկին խիստ քննադա-

տաքար է մոտենում Բուշի ծրագրին: Ըստ նրա, ընդունելով ԱՄՆ-ի պարտությունն Իրաքում՝ Բուշը փորձում է օգտագործել պատասխանատվությունից խուսափելու ստանդարտ ձեւ՝ պարտությունը համարելով իր սխալը: Քաղաքական հնարք է Իրաք լրացուցիչ զորք ուղարկելը: Ռազմական հաղթանակի հասնել՝ չի նշանակում հաղթել պատերազմը: Ամերիկյան զինվորների մասնակցությունը փողոցային արյունոտ մարտերին եւ դրանց ելքը չեն կարող ազդել շարունակական քառուսի, էթնիկ եւ միջդավանական բռնության, ինչպես նաեւ գրոհայինների նպատակամղված հակաամերիկյան գործողությունների դադարեցման վրա:

Իսկ Իրաքում ռազմաքաղաքական իրավիճակը եւ անվտանգության ոլորտը շարունակում են մնալ բարդ: Նուրի Ալ-Մալիքիի կառավարությունը, չնայած բազմաթիվ խոստումներին, չի կարողանում արդյունավետ գործել: Սուենի—շիա հակամարտության մեջ աստիճանաբար ավելի մեծ թվով պետություններ են ներքաշվում: Իրաքյան պաշտոնական տվյալներով՝ Սաուդյան Արաբիայի առանձին շրջանակներ հսկայական միջոցներ են տրամադրում սուենի գրոհայիններին, ինչը, բնականաբար, անհանգստացնում է Թեհրանին: Իր հերթին սաուդական հատուկ ծառայությունները մեղադրում են Իրանին՝ շիական ռազմաքաղաքական խմբավորումներին աջակցելու, իրաքյան տարածքում շիական պետություն ստեղծելու մեջ: Պաշտոնական Ռիադն արդեն հայտարարել է, որ եթե ԱՄՆ-ը ներկա փուլում հեռանա Իրաքից, ապա իրենք ստիպված կլինեն միջամտել իրաքյան խնդրին, օգնել եւ զինել սուենիներին, որպեսզի նրանք կարողանան դիմագրավել շիական սպառնալիքը:

Իրաքյան ներկայիս իրողությանը բնորոշ է ռազմական խմբավորումների գործունեությունը, ինչը հիշեցնում է լիբանանյան քաղաքացիական պատերազմի ժամանակ միմյանց հետ հակամարտող ռազմաքաղաքական կառույցների գործելակերպը: Իրաքում ներկա փուլի մյուս առանձնահատկություններից մեկը կապված է շիական եւ սուենիական «մահվան էսկադրոնների» գործողությունների հետ, որոնք ներգրավված են մարդկանց սպանության մեջ՝ ըստ կրոնական հատկանիշի: Բազմաթիվ տվյալներ կան այն մասին, որ շիական էսկադրոնները շատ դեպքերում օգտվում են պետական ուժային կառույցների աջակցությունից: Աստիճանաբար ակնհայտ է դառնում Բաղդադի բաժանումը երկու՝ արեւելյան (մեծ մասամբ՝ շիական) եւ արեւմտյան (հիմնականում՝ սուենիական) մասերի: Այն եւս հիշեցնում է կրոնական հիմքի վրա Բեյրութի բաժանումը քաղաքացիական պատերազմի շրջանում: Արեւմտյան լրատվամիջոցների հաղորդմամբ՝ շիաները ձգտում են

աստիճանաբար դուրս մղել սուսնիներին Բաղդադից: Միջավանական թշնամությունից եւ ջարդերից խուսափելու համար շատերը հեռացել են իրենց մշտական բնակության վայրերից դեպի անվտանգ շրջաններ: 2003-ից ի վեր մոտ 2 միլիոն մարդ է արտագաղթել երկրից:

Իրաքյան պառլամենտի խոսնակ, սուսնիադավան Մահմուդ Ալ-Մաշհադանիի կարծիքով՝ իրաքյան հասարակության երկփեղկվածությունը կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ իրաքյան քաղաքական եւ կրոնական ուժերը չեն հրաժարվել ծայրահեղությունից եւ իրենց նեղ քաղաքական հետաքրքրություններից: Թե երբ եւ ինչպես դա պետք է տեղի ունենա, պարզ չէ, հատկապես որ արտաքին դերակատարները դրանում, կարծես, շահագրգիռ չեն:

Փորձագետների գնահատմամբ, 2007 թվականին մերձավորարեւելյան տարածաշրջանում, ընդհանուր առմամբ, կշարունակվի լարվածությունը. մասնավորապես՝ Իրանի միջուկային ծրագրի շուրջ, Պաղեստինում Ֆաթհ եւ Համաս խմբավորումների միջեւ, Պաղեստինի եւ Իսրայելի միջեւ, Լիբանանի ներքաղաքական կյանքում, Աֆղանստանում եւ, ի վերջո Իրաքում, որտեղ առկա իրավիճակի հետագա շարունակումը, ինչպես նշել է Ռոբերտ Գեյթսը, կարող է հանգեցնել «տարածաշրջանային պայթյունի»:

ՀԱՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱ. ՀԱՅԱՑՔ ԱՊԱԳԱՅԻՆ Ա. Գոնչարենկո

Համաշխարհային էներգետիկայի ընթացիկ վիճակը որոշում են այնպիսի երկրներ ու տարածաշրջաններ, ինչպիսիք են Միացյալ Նահանգները, Մերձավոր Արեւելքը, Ռուսաստանը, Չինաստանն ու Եվրամիության անդամ պետությունները: ԱՄՆ-ը նավթի խոշորագույն սպառողն է (24,6%, որի կեսից ավելին ներմուծվում է), բնական գազի առաջատար ներկրողը (համաշխարհային ներմուծման 16%-ը):

Վերջին 40 տարիներին նավթի սպառումը Չինաստանում ավելացել է ավելի քան 25 անգամ եւ կազմում է համաշխարհային սպառման 8,55%-ը:

Արեւմտյան Եվրոպայի նավթի սպառման բաժինը կազմում է 22%, ընդ որում, Գերմանիան հանդիսանում է աշխարհում գազի երկրորդ ներկրողը (14%): ԵՄ տնտեսական գոտում զետեղված է գազի համաշխարհային ապացուցված պաշարների սոսկ 3,5%-ը եւ նավթի համաշխարհային ապացուցված պաշարների 2%-ից էլ պակաս մասը (հիմնականում Նորվեգիայում եւ Մեծ Բրիտանիայում): Միաժամանակ, նավթագազային հանքավայրերն այնտեղ անհամեմատ ինտենսիվ են շահագործվում, քան աշխարհի մյուս շրջաններում, ինչը հանգեցնում է պաշարների արագ սպառմանը: ԵՄ հիմնական խնդիրը էներգակիրների ներկրումից կախվածության աճն է. 2030թ. այն կկազմի 70%, մինչդեռ նավթի ներմուծումը կարող է ավելանալ 76-90%-ով, գազինը՝ 40-70%, ածխինը՝ 50-70%:

Ռուսաստանին է պատկանում բնական գազի համաշխարհային պաշարների 26,6%-ը, տարբեր գնահատումներով՝ նավթի հետազոտված պաշարների 6,2-13%-ը, քարածխի հետազոտված պաշարների շուրջ 20%-ը: Երկիրը բնական գազի խողովակաշարային առետրի գծով աշխարհում գրավում է առաջին տեղը եւ որպես նավթ արտահանող՝ առաջնության դափնին կիսում է Սաուդյան Արաբիայի հետ: Այսօր ռուսական արտահանվող էներգակիրների ավելի քան 90%-ը մատակարարվում է Եվրոպայի պետություններին:

Մերձավոր Արեւելքի երկրներում կենտրոնացած են նավթի համաշխարհային պաշարների 61%-ը եւ գազի համաշխարհային պաշարների 40,1%-ը: Մերձավորարեւելյան տարածաշրջանի երկրներից առանձնանում են Սաուդյան Արաբիան՝ նավթի համաշխարհային ապացուցված պաշարների 22%-ով, Իրանը՝ 11,5%-ով, Իրաքը՝ 9,6%-ով:

Բացի այդ, Սաուդյան Արաբիայում կենտրոնացված է նավթի համաշխարհային արտադրության 13,5%-ը: Գազի ապացուցված համաշխարհային պաշարների 14,3%-ը պատկանում է Կատարին, 14,9%-ը՝ Իրանին:

Այս պայմաններում սկզբունքային նշանակություն է ձեռք բերում Չինաստանի եւ Միացյալ Նահանգների միջեւ աշխարհաքաղաքական դիմակայությունը: 2030թ. ՉԺՅ-ն ներմուծվող նավթի ծավալներով կհավասարվի ԱՄՆ-ին: Ընդ որում, չինական ղեկավարությունը պարզորեն գիտակցում է, որ առանց էներգապաշարների հուսալի աղբյուրների ապահովման՝ անհնարին կլինի տնտեսության հետագա աճը: Հենց այդ պատճառով էլ էներգետիկ անվտանգությունը եւ նոր շուկաների փնտրումը համաշխարհային տնտեսության առաջատարներից մեկի՝ Չինաստանի համար կդառնա «գոյատևման» խնդիր: Իր հերթին, Վաշինգտոնը շահագրգռված չէ ածխաջրածնային շուկայում չինական ներկայության ուժեղացմամբ եւ պատրաստ է օգտագործել քաղաքական ու տնտեսական առավելագույն լծակներ՝ այնտեղ թույլ չտալու չինական նավթագազային ընկերություններին:

Ձարգացման հիմնական ուղղությունները մոտակա տասնամյակում

Մոտակա տասնամյակում նավթը մնալու է հիմնական էներգակիրը՝ ապահովելով էներգասպառման գրեթե 40%-ը: Նրան հետեւում է գազը՝ 28%, ածուխը՝ 20%, վերականգնվող աղբյուրները՝ 7% եւ միջուկային էներգիան՝ 5%: Բնական գազի ու նավթի մասնաբաժինները կավելանան, մինչդեռ ածխինը եւ միջուկային էներգիայինը կկրճատվեն: Հնարավոր է, որ տասնամյակի վերջին միջուկային էներգիայի սպառումը կայունանա եւ սկսի ընդարձակվել այլընտրանքային աղբյուրների կիրառման ոլորտը, սակայն դա առնվազն մոտակա 15-25 տարիների ընթացքում չի ազդի բազային միտումների վրա: Ավելի հեռավոր ապագայում համաշխարհային էներգահաշվեկշռի կառուցվածքը, հավանաբար, կծգտի ձեւափոխության հիմնականում երկու սցենարով:

Առաջինը նախատեսում է նավթից աստիճանական անցում գազի, մոտավորապես այնպես, ինչպես նավթը դուրս մղեց ածխին: Այնուհետեւ սպասվում է տեղաշարժ դեպի վերականգնվող աղբյուրները եւ, ըստ երեւույթին, դեպի ատոմային էներգիան: Ընդ որում, նավթը, ամեն դեպքում, մինչեւ 21-րդ դարի կեսերը պահպանելու է դիրքերը որպես էներգիայի կարեւոր աղբյուր:

Համաձայն երկրորդ սցենարի, եթե մոտակա տասնամյակում ջրածնային տեխնոլոգիաների բնագավառում ձեռք բերվի առաջընթաց, որը կնպաստի բենզինային շարժիչների արագ դուրսմղմանը, ապա

նավթի գործածման կրճատումը կսկսվի անհամեմատ շուտ՝ մոտավորապես 2025 թվականին: Սակայն դա առայժմ քիչ հավանական է:

Չինաստանը, հավանաբար, բոլոր ուժերը կգործադրի, որպեսզի ընդլայնի սեփական ազդեցությունն ու տնտեսական ներկայությունը Մերձավոր Արեւելքում, Աֆրիկայում, Լատինական Ամերիկայում եւ Կենտրոնական Ասիայում: Կանխատեսելի են նրա «իրավիճակային» դաշինքները Յնդկաստանի եւ, հնարավոր է, Ռուսաստանի հետ՝ ընդարձակելու համար ներկայությունը համաշխարհային էներգետիկայում: Աշխարհագրական էքսպանսիայի գծով՝ էներգետիկ շուկաներում Չինաստանի հիմնական մրցակիցը մնալու է ԱՄՆ-ը:

Լատինական Ամերիկայում արդյունահանման ավելացման գլխավոր աղբյուրը կլինի Բրազիլիայի խորջրյա շելֆը: Հավանաբար, այն կշահագործեն ամերիկյան կորպորացիաները, եւ բրազիլական նախագծերի հիման վրա արդյունահանվող ածխաջրածինները Վաշինգտոնը կօգտագործի այն քաղաքականության շրջանակներում, որն ուղղված է մերձավորարեւելյան մատակարարներից կախվածության նվազեցմանը:

Միեւնույն ժամանակ, Վենեսուելա—Կուբա—Բոլիվիա միության ստեղծումը կարող է ներգրավել Լատինաամերիկյան այլ երկրներ: Այդպիսով, նավթի բարձր գների պայմաններում ստեղծվում են նախադրյալներ, որպեսզի հարավամերիկյան նավթի հոսքերը հյուսիսամերիկյան ուղղությունից վերակողմնորոշվեն դեպի ասիական-խաղաղօվկիանոսյան: Միաժամանակ, Միացյալ Նահանգներ նավթի մատակարարման լրիվ դադարեցման վտանգի դեպքում՝ ԱՄՆ-ը Վենեսուելայում վարչակարգի փոխման ուղղությամբ կարող է դիմել առավել վճռական միջոցների:

Սպասվում է համաշխարհային էներգետիկայում Սեւ աշխարհամասի մասնաբաժնի զգալի ավելացում: Հյուսիսային եւ Արեւմտյան Աֆրիկայում (Նիգերիա, Ալժիր, Եգիպտոս, Լիբիա) գոյություն ունեցող արդյունահանման նախագծերից զատ, միջազգային էներգետիկ ընկերությունները եռանդուն կերպով ներդրումներ կկատարեն Արեւելյան ու Հարավարեւելյան Աֆրիկայի (Սուդան, Տանզանիա, Անգոլա) երկրաբանական հետախուզության եւ արդյունահանման մեջ:

Աֆրիկայում աճի տեմպերով առաջատար կլինի Անգոլան, որտեղ ողջ հզորությամբ աշխատում են վերջին տարիներին բացված խորջրյա հանքավայրերը:

Աֆրիկյան նավթագազային նախագծերում հիմնական մրցակիցները Միացյալ Նահանգներն ու Չինաստանն են: ԱՄՆ-ը առաջինը ձեռնամուխ եղավ այս ուղղությամբ աշխատանքներին, սակայն ՉԺՀ-ն գերազանցող տեմպերով ընդարձակում է իր ներկայությունն Աֆրիկայում: Ամենայն հավանականությամբ, Վաշինգտոնը կջանա օգտագործել սեփական քաղաքական ազդեցությունն աֆրիկյան պետությունների մեծ մասում՝

նպատակ ունենալով սահմանափակել չինական ընկերությունների մուտքը աֆրիկյան վառելիքաէներգետիկ համալիր (ՎԷՀ):

Կասպիայում նավթի արդյունահանումը կաճի: Մինչեւ 2015թ. ժամանակահատվածում այստեղ առաջնության դափնին կպահպանի Ադրբեջանն՝ իր Ազերի—Չիրահ—Գյունեշլի նավթային հորանցքներով եւ Շահ-Ղենիզ գազային հանքավայրերով: 2015 թվականից նավթի բազային աղբյուրը կդառնա ղազախական Քաշահանը: Ինչ վերաբերում է գազի պաշարներին, ապա 2017թ. նրա հիմնական մատակարարները կմնան Թուրքմենստանը եւ Ղազախստանը, մինչդեռ Ադրբեջանի բաժինը կնվազի:

Կասպյան տարածաշրջանում, ընդհանուր առմամբ, աշխարհաքաղաքական իրավիճակը դասավորվում է Արեւմուտքի օգտին: Արդեն գործում է Բաքու—Թբիլիսի—Ջեյհան (ԲԹՋ) նավթամուղը՝ շրջանցելով Ռուսաստանը եւ թուրքական նեղուցները, 2007թ. կշահագործվի Բաքու—Թբիլիսի—Էրզրում գազամուղը: Ամենայն հավանականությամբ, մինչեւ 2015թ. կկառուցվի գազամուղ Թուրքիայից (հեռանկարում՝ գազի մատակարարումներ Իրանից, Ղազախստանից եւ Թուրքմենստանից) դեպի Եվրոպա («Նաբուկո» նախագիծ): Այդ կապակցությամբ կարելի է սպասել ԱՄՆ-ի ու ԵՄ-ի կողմից Թուրքմենստանի վրա ճնշման մեծացում՝ նպատակ ունենալով գազային հոսքերն ուղղել դեպի ծրագրվող գազամուղ: Միաժամանակ, Ղազախստանը եւ Թուրքմենստանը կիրագործեն Չինաստան նավթի ու գազի մատակարարման խողովակաշարային նախագծերը:

Կասպիայի վրա Ռուսաստանի ազդեցությունը կլինի նվազագույն: Թերեւս, նրա դիրքերը՝ որպես կասպյան նավթի ոչ մեծ ծավալները խողովակաշարով տարանցող երկիր, կպահպանվեն ներկայիս մակարդակում: ԲԹՋ լրիվ հզորությամբ գործարկման դեպքում Բաքու—Նովոռոսիյսկ խողովակաշարով նավթի մատակարարումները, հավանաբար, կսառեցվեն:

Մեծ Մերձավոր Արեւելքն, ընդհանուր առմամբ, մնալու է ԱՄՆ ռազմավարական հսկողության տակ: Էներգետիկ անվտանգության տեսանկյունից, մինչեւ 2017թ. ժամանակահատվածում պաշարների հիմնական աղբյուրը նախկինի պես լինելու է Սաուդյան Արաբիան, որը 2010թ. շահագործելու է նոր արդյունահանող հզորություններ: Այդ իսկ պատճառով նավթի համաշխարհային շուկայում սաուդցիների մասնաբաժինը կպահպանվի, թեւեւ Միացյալ Նահանգները, Չինաստանը, ԵՄ-ը եւ ճապոնիան զգալի ջանքեր կգործադրեն մերձավորարեւելյան նավթից կախվածությունը նվազեցնելու համար: Ընդհանրապես, տարածաշրջանի երկրների մեծ մասը կշարունակի խուսանավելու քաղաքականությունը գլխավոր սպառողների՝ ԱՄՆ-ի եւ ՉԺՀ-ի միջեւ:

Եթե ընդլայնված Մերձավոր Արեւելքում պահպանվի ռազմաքաղաքական անկայունությունը, հազիվ թե հնարավոր լինի մինչեւ 2015թ. ժամանակահատվածում որեւէ հեղափոխական ճեղքում սպասել իրաքյան նավթի եւ իրանական գազի մատակարարումներում: Բացառված չէ, որ մոտակա 10 տարիներին Վաշինգտոնը փորձեր կձեռնարկի՝ իր համար նվազագույն ֆինանսական ու վարկանիշային կորուստներով հսկողություն սահմանել նավթի եւ գազի մատակարարումների տեսանկյունից առավել կարելու տարածաշրջանների վրա: Իրաքի նկատմամբ արդեն գործի է դրվել երկիրը երեք հատվածի մասնատելու գործընթացը, որի արդյունքում նավթով առավել հարուստ հյուսիսը, ինչպես հույս ունեն ԱՄՆ-ում, կանցնի ամերիկա-քրդական ղեկավարությանը:

Մոտակա տասնամյակում Մեծ Մերձավոր Արեւելքն ԱՄՆ-ի համար, ըստ էության, կմնա որպես ածխաջրածինների՝ ավելի տեսական հեռանկարի «պահուստային» աղբյուր, մինչդեռ ակտիվորեն կզարգանան նավթի հանույթի լատինաամերիկյան, աֆրիկյան, կանադական եւ կասպյան ուղղությունները:

Իրանի ինչպես քաղաքական, այնպես էլ էներգետիկ դերը միջազգային ասպարեզում կաճի: Թեհրանը կշարունակի էներգակիրների արտահանման աշխարհագրությունն ընդարձակելու փորձերը: Նրա գազային ռազմավարության տարածաշրջանային ուղղություններից կարելի է առանձնացնել արեւմտյանը (Թուրքիա, Եվրոպական շուկաներ), հյուսիսայինը (Հարավային Կովկաս եւ Կենտրոնական Ասիա) եւ արեւելյանը (Պակիստան, Հնդկաստան, Չինաստան, Հարավարեւելյան Ասիայի երկրներ): Իրանի գազային քաղաքականության «արեւմտյան վեկտորի» հեռանկարները (Իրան-Թուրքիա գազամուղ՝ Եվրոպական շուկաներ դուրս գալու հեռանկարով) կհայտնվեն քաղաքական մեծ ռիսկերի գոտում: Այնուամենայնիվ, Իրանն իր պաշարներով Ռուսաստանից եւ էներգետիկ անկախության հիմնական բանալին է:

Այս տեսակետից, Միացյալ Նահանգները շահագրգռված է «իրանական խնդրի» շուտափույթ հանման եւ իրանական էներգետիկ կարողությունը սեփական աշխարհաքաղաքական խնդիրների լուծման համար օգտագործելու մեջ: Խոսքն, առաջին հերթին, Ռուսաստանից եւ էներգետիկ կախվածության նվազեցման մասին է: Այնուամենայնիվ, Եվրոպական շուկաներ իրանական ածխաջրածինների փոխադրման ոլորտում խոշոր նախաձեռնությունները, փաստորեն, կարող են կենսագործվել միայն իրանական միջուկային խնդրի լուծումից հետո: Այնքան ժամանակ, քանի դեռ այդ խնդիրը չի հանվել, Իրանը կշարունակի նախելառաջ կողմնորոշվել դեպի Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների իրացման շուկա:

Մոտակա տասնամյակում անշեղորեն կաճի զարգացած սպառող

երկրների ուշադրությունն այլընտրանքային եւ վերականգնվող էներգակիրների նկատմամբ: Ներկայումս այն էներգետիկայի առավել հարածուն հատվածներից է: Համընդհանուր հետաքրքրություն կառաջանա քանու էներգիայի, հիդրոէներգետիկայի, ինչպես նաեւ էթանոլի նկատմամբ, որի խոշորագույն արտադրողը Բրազիլիան է: Երեւան կգան լուրջ նախագծեր՝ կապված կենսավառելիքի օգտագործման հետ: Էներգետիկայի այլընտրանքային տեսակների մշակման մեջ հիմնական ներդրումները սպասվում են ԱՄՆ-ի, ճապոնիայի, Չինաստանի, ինչպես նաեւ համաշխարհային առաջատար նավթային կոնցեռնների՝ «British Petroleum»-ի, «ExxonMobil»-ի, «Royal Dutch/Shell»-ի եւ մյուսների կողմից:

Նոր տեխնոլոգիաները կապահովեն էներգասպառման արդյունավետության մեծացումը, սակայն այլընտրանքային աղբյուրների մասնաբաժինն էներգիայի ընդհանուր հաշվեկշռում կաճի սոսկ չնչին չափով: Որպեսզի էներգիայի վերականգնվող աղբյուրները ծածկեն էլեկտրաէներգիայի պահանջվող աճի թեկուզեւ կեսը, հարկ կլինի նրանց հզորություններն ավելացնել 63 անգամ: Նման ծրագրի իրականացումը 10 տարվա ընթացքում հնարավոր չի թվում: Նշված ժամկետում (մինչեւ 2017թ.) նույնպես գործնականում անիրական է մոբիլիզացնել «այլընտրանքային» նավթի (գերծանր նավթ, թերթաքարեր եւ այլն) արտադրությունը կամ յուրացնել դժվարամատչելի շրջաններում գտնվող հանքաշերտերն ու հանքավայրերը:

Բնական հեղուկ գազի (ԲԳ) շուկան դառնում է գլոբալ: Հեղուկ գազի պահանջարկի հիմնական աճը սպասվում է Միացյալ Նահանգների եւ Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների կողմից: ԱՄՆ-ը, արդեն իսկ հանդիսանալով բնական գազի խոշորագույն ներկրող, մինչեւ 2017թ. կավելացնի ԲԳ ներմուծումը, որին են ուղղված 55 նոր ընդունող տերմինալների նախագծերը՝ ներառյալ ԲԳ վերագազաֆիկացման գործարանները: Ամենայն հավանականությամբ, ընդհուպ մինչեւ 2020թ., ճապոնիան մնալու է առաջատար ԲԳ շուկայում, որից հետո հեղուկ գազի սպառման գծով առաջին տեղ է դուրս գալու Միացյալ Նահանգները: Այսպես թե այնպես, գազի հիմնական ծավալը, նախկինի պես, սպառողներին հասցվելու է խողովակաշարային տրանսպորտով:

Միջուկային էներգիայի բաժինը կրճատվելու է մինչեւ 5,3%, ինչը պայմանավորված է էներգետիկ համակարգի անվտանգության եւ էկոլոգիական հուսալիության բարձրացման ուղղությամբ զարգացած երկրների քաղաքականությամբ: Աշխարհում միջուկային էներգիայի օգտագործման նվազեցումը տեղի է ունենալու Եվրոպայում նրա արտադրության կրճատման (տարեկան 1,1%) եւ Հյուսիսային Ամերիկայում սպառման կայունացման հաշվին: ԱԷԿ-ների հետեւողական

վերացումը Եվրոպայում (բացի Ֆրանսիայից) փոխարինվելու է Ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրներում (Չինաստան, Յնդկաստան, Պակիստան, Հարավային Կորեա եւ այլն), ինչպես նաեւ Ռուսաստանում, Իրանում եւ Բրազիլիայում նրանց գործարկմամբ: Ատոմային էներգիայի սպառումը Հյուսիսային Ամերիկայում, Ճապոնիայում ու Ֆրանսիայում մոտակա տարիներին փոքր-ինչ կավելանա, որից հետո տեղի կունենա նրա կայունացում:

Միջնաժամկետ հեռանկարում համաշխարհային գների էական անկման վտանգը խիստ լուրջ է: Դրան են նպաստում նավթի եւ գազի պակասի բացակայությունը, ինչպես նաեւ ապագայում վառելիքի ավանդական տեսակների հանդեպ զարգացած երկրների հետաքրքրության կտրուկ նվազումը, Կասպիայում, Աֆրիկայում եւ աշխարհի մյուս տարածաշրջաններում նոր հզորությունների երեւան գալը, տոկոսային դրույքների բարձրացման ուղղությամբ սպառող երկրների՝ առաջին հերթին, ԱՄՆ-ի նպատակաուղղված քաղաքականությունը: Արդյունքում՝ ներդրողների զգալի մասը հեռանում է հումքային շուկայից, ինչը սահմանափակում է ածխաջրածինների գների սպեկուլյատիվ աճի հնարավորությունները:

Մոտակա ժամանակներում ածխաջրածնային շուկայի գնային իրավիճակի ձեւավորման հիմնական գործոնը կլինի Իրանի շուրջ քաղաքական կացության զարգացումը:

Առավել իրական է համարվում Վաշինգտոնի ու Թեհրանի հետագա դիմակայության սցենարը, որը, սակայն, չի հանգեցնելու ռազմական բախման: Տվյալ պայմաններում համաշխարհային էներգետիկ շուկայում երկու-երեք տարի պահպանվելու է նավթի գների անկման միտումը, եւ այն կհասնի մինչեւ մեկ բարելի համար 40-50 դոլարի մակարդակին՝ 5-10 դոլար տատանումներով:

Ռազմական սցենարի իրականացման դեպքում նավթի մեկ բարելի գինը կգերազանի 100 դոլարը: Հետագայում, եթե հակամարտությունն ընդունի տեւական բնույթ, նավթի գինը կբարձրանա մինչեւ 130-150 դոլար մեկ բարելի համար, ինչը կստիպի Վաշինգտոնին ճնշում գործադրել OPEC երկրների վրա՝ նպատակ ունենալով ապահովել ածխաջրածնային պաշարների լրացուցիչ ծավալներ էներգետիկ շուկայում: Միաժամանակ, այս սցենարը զգալիորեն կուժեղացնի մրցակցությունը OPEC-ից դուրս գոտիներում ածխաջրածինների հանույթի համար:

Եվ եթե ռազմական դիմակայությունը զարգանա «իրաքյան» սցենարով, սպասվում է էներգետիկ շուկայի աստիճանական վերափոխում, որը կարող է ձգվել մինչեւ 2015—2017 թվականները:

«Россия в глобальной политике», № 6, 2006

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գագիկ Տեր-Հարությունյան ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ	1
Սուրեն Մանուկյան ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ	6
Դավիթ Հովհաննիսյան ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ	13
Սեւակ Սարուխանյան ՌՈՒՄԱՍՏԱՆ–ԲԵԼԱՌՈՒՄ. ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃԳՆԱԺԱՄ	18
Սուրեն Սարյան ԱՄՆ ԱՐՏԱՔԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ	22
Արաքս Փաշայան ԻՐԱՔՅԱՆ ԹՆՋՈՒԿ	29
Ա. Գոնչարենկո ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱ. ՀԱՅԱՑՔ ԱՊԱԳԱՅԻՆ	34

*Շապիկի վրա պատկերված է **Նեմրուքի հնավայրը**
(Տավրոսի լեռնաբազուկներից, հին Կոմմագենում)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Սելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,25 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ ՕՄՍ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: